2006, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (235)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Սբ. Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների տոնը Մայր Աթոռում



Դեկտեմբերի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սբ. Թադեոս եւ Սբ. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Սբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը:

Հայաստան աշխարհի լուսավորիչ առաքյալների հիշատակին էր նվիրված նաեւ դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցած հանդիսությունը: «Հայոց Հայրապետներ» թեմայով բանախոսություն կարդաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը՝ ունկնդիրներին ներկայացնելով մերօրյա պատմագրության տվյալները Սբ Թադեոս եւ Սբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության վերաբերյալ:

Հանդիսությանը գեղարվեստական կատարումներով հանդես եկավ Սբ Գեղարդի վանքի երգչախումբը (խմբավար՝ Անահիտ Պապայան): Հանդիսության ավարտին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վարդապետ Նայանն անդրադարձավ տոնի խորհրդին՝ ընդգծելով սեփական ակունքների ճանաչողության կարեւորությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի ուսանողությունը եւ հյուրեր:

## Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Հընթացս Սբ Պատարագի, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպս Ժամկոչյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Քահանայից լսարանի շրջանավարտ չորս սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրող սրբազան հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգեւոր նոր անուններով. Նվեր սրկ. Մելքումյանը կոչվեց Տ. Ահարոն, Արկադի սրկ. Օրդոյանը՝ Տ. Արարատ, Ներսեհ սրկ. Սարգսյանը՝ Տ. Մարկոս եւ Սեւակ սրկ. Գալստյանը՝ Տ. Փառեն:



Ձեռնադրությունից հետո Անուշավան սրբազանը նախ գոհություն հայտնեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգեւոր դասը համալրելու են գալիս չորս նորընծա քահանաներ, ապա դիմելով վերջիններիս՝ անդրադարձավ հոգեւոր հովվի առաքելությանը. «Սիրելի՛ նորաօծ հայրեր, աստվածային խոսքի մշակներ լինելը սոսկ բառերով չի սահմանափակվում. այն իր մեջ որքան քաղցրություն եւ ուրախություն ունի, այնքան էլ՝ դառնություն եւ դժվարություն: Քրիստոսի առաքյալ դառնալը միայն այս պահով չի սահմանափակվում, միայն օծում ստանալով չի որոշվում: Դուք ձեր ողջ կյանքի ու ծառայության ընթացքում պետք է դառնաք արժանի քարոզիչն ու մշակը, արժանի առաքյալն ու սպասավորը մեր Եկեղեցու եւ ժողովրդի»:

Սբ Պատարագի ընթացքին խորան բարձրացան եւ նորընծա քահանաներին շնորհավորեցին նաեւ Մայր Աթոռի միաբանները:

Մայր Աթոռում իրենց քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, քահանա հայրերը հովվական ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում:

## Շքանշանների հանձնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց ծառայությունների համար պարգեւատրվեցին «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր տիար Հակոբ Ավետիքյանը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» եւ տիար Լեւոն Սարգսյանը՝ «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններով:

Հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի ողջույնի խոսքով: Հայրապետական սրբատառ կոնդակներն ընթերցեցին Մայր Աթոռի միաբաններ Տ. Փառեն եպս Ավետիքյանը եւ Տ. Անուշավան եպս Ժամկոչյանը:

Պրն Հակոբ Ավետիքյանին տրված կոնդակում ի մասնավորի ասվում է. «...Հայրենի մեր երկրի զորացմանն ու առաջընթացին Ձեր կարողությունները ներդնելու պատրաստակամությունը առաջնորդեց Ձեզ Հայրենիք, որտեղ Տիրոջ օրհնության ներքո շարունակում եք հարստացնել ազգօգուտ եւ եկեղեցաշեն Ձեր վաստակը: Ահավասիկ, շուրջ տասնհինգ տարիներ են անցել ծանր ու դժվարին այն օրերից, երբ Դուք Ձեր գաղափարակից ընկերների հետ հիմնադրեցիք «ԱԶԳ» օրաթերթը: Այսօր ուրախ ենք նշելու, որ «ԱԶԳ»-ը իր ուրույն տեղն ունի մեր երկրի լրատվամիջոցների մեջ եւ գնահատված է բոլոր ընթերցողների կողմից: Թերթը եւ նրա աշխատակիցներից շատեր արդարորեն արժանացել են միջազգային եւ հայրենական տարբեր մրցանակների, իսկ Դուք որպես գլխավոր խմբագիր՝ «Մովսես Խորենացի» պետական բարձր պարգեւի: Առանձնակի գոհունակություն է Մեզ համար, որ «ԱԶԳ»-ը հոգեւոր կյանքին նվիրված հետաքրքիր հրապարակումներով մշտապես խրախուսում ու քաջալերում է բարեպաշտ հայորդյաց հավատարմությունը առ Հայոց Եկեղեցին ու հավատի մեր սուրբ օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Պրն Լեւոն Սարգսյանին տրված Հայրապետական կոնդակում ասվում է. *«...Տարիներ շարունակ Դուք ի սպաս եք դնում Ձեր կարողությունները՝ հանուն Հայրենի մեր երկրի զորացման ու առաջընթացի եւ հավատավոր մեր ժողովրդի բարօրության: Երկար տարիներ դիվանագիտական աշխատանք իրականացնելով Սիրիայում՝ Դուք մեծ ավանդ եք բերել բարեկամ այդ երկրի հետ Հայաստանի հարաբերությունների առավել զորացմանը եւ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:*

*Սիրիայում պաշտոնավարելու ընթացքին Դուք մեծ արդյունավորությամբ աջակցել եք նաեւ Դամասկոսի Հայոց Թեմի առջեւ ծառացած խնդիրների հաղթահարմանը եւ Հայրենիքից հեռու բնակություն հաստատած հայորդիների ազգային եւ եկեղեցական կյանքի շինությանն ու պայծառությանը, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգության ու մայրենի լեզվի պահպանության հանդեպ նախանձախնդրությունը զորացնելու սրբազան առաքելությանը: Սիրիահայ գաղութից ներս ծավալած Ձեր ազգօգուտ եւ եկեղեցաշեն գործունեությունը, որ արգասավորությամբ շարունակում եք նաեւ այսօր, արժանիորեն բերել է Ձեզ հարգանքը Դամասկոսի Հայոց Թեմի հոգեւոր դասի եւ բարեպաշտ հավատացյալների:*



*Գոհունակությամբ ենք անդրադառնում Միածնաէջ Սուրբ Աթոռի շինությանն ու պայծառությանը մասնակցություն բերելու Ձեր ազնիվ պատրաստակամությանը: Ձեր մատուցած բազմաթիվ ծառայությունները, ի շարս որոնց՝ ձեռագիր Աստվածաշնչի ընծայաբերումը Մայր Աթոռին ձեռագրատանը եւ երաժշտական գործիքների ապահովումը Հայորդյաց տներին, որոնք արտահայտությունն են Ձեր հավատավոր եւ ազգասեր հոգու, անկեղծ ուրախություն են պարգեւում Մեզ, որ Էջմիածնասեր ոգին զորեղ է Ձեզ պես հայորդյաց սրտերում եւ ծնունդ է տալիս բարի իրագործումների»:*

Կոնդակների ընթերցումից հետո Նորին Սրբությունը Հակոբ Ավետիքյանին եւ Լեւոն Սարգսյանին հանձնեց Հայ Եկեղեցու պատվո բարձր շքանշանները:

Երախտագիտության խոսք ասացին նաեւ օրվա մեծարյալները:

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: *«...Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ուրախության օր է, որովհետեւ այսօր մենք մեր Եկեղեցու երկու հավատավոր զավակներին արժանին մատուցեցինք՝ գնահատելով իրենց ծառայությունը եւ տարիների վաստակը: Նրանք իրենց կարողությունները ծառայեցրել են ազգին եւ Եկեղեցուն՝ գիտակցելով, որ մեկի ուժը մյուսի առավել զորացումն է, գիտակցել են, որ իրենք որպես ազգի զավակներ պարտավորություն ունեն նաեւ իրենց ծառայությունը բերելու նաեւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ անմնացորդ սիրով ու նվիրումով նրանք արել են հնարավորինը եւ կարելին, որպեսզի թե իրենց ծնողների, թե իրենց ժողովրդի ու Եկեղեցու առջեւ անպարտ չմնան»:*

Նորին Սրբությունը մաղթեց մեծարյալներին, որպեսզի Տիրոջ հովանավոր Աջը մարտակից լինի նրանց, որ նույն նախանձախնդրությամբ ու եռանդով շարունակեն իրենց ծառայությունը բերել Հայրենիքին ու Մայր Եկեղեցուն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԼՈՒՐԵՐ Սփյուռքից

## Վերաբացվեց վերանորոգված Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին



Դեկտեմբերի 5-ը նշանակալից օր էր ողջ հնդկահայ գաղութի համար, քանզի կրկին իր հյուրընկալ դռները բացեց հիմնովին վերանորոգված Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին:

1758թ. Ջուղայեցի նշանավոր վաճառական Խոջա Պետրոսի ջանքերով կառուցված եկեղեցին գրեթե կես դար չէր գործում: Բնական աղետների պատճառով զգալիորեն տուժել էր եկեղեցու քարեղեն շինությունը: Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Կալկաթայի եկեղեցական վարչության անմիջական ջանքերի շնորհիվ այսօր Ս. Մարիամ եկեղեցին հիմնովին վերանորոգվել է, բարեկարգվել տարածքը, կառուցվել նոր զանգակատուն, Հայոց Եկեղեցուն են վերադարձվել նախկինում բռնազավթված տարածքները:

Հնդկահայոց հոգեւոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը կատարեցին դռնբացեքի արարողություն, որից հետո եկեղեցու վերջին խնամակալ Տիկին Մերի Կարապետյանի գերեզմանի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Օշական վարդապետը շնորհավորեց ամենքին բարեբաստիկ օրվա կապակցությամբ՝ ընդգծելով հայ քրիստոնյայի մշտական ներկայության կարեւորությունը երբեմնի հայաշունչ Սայդաբադ քաղաքում: Հայր սուրբն իր գնահատանքը հայտնեց նաեւ Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներին՝ կատարված աշխատանքի համար:

Արարողությանը ներկա էին եկեղեցական վարչության անդամներ, հնդկահայեր, ԱՄՆ-ից եւ Հունաստանից այս առիթով ժամանած Սայդաբադի հայկական եկեղեցու վերջին խնամակալներ Մատթեոս եւ Մերի Կարապետյանների թոռնուհիները՝ Տիկին Հեղինե եւ Սիլվա Կարապետյանները, Սայդաբադի պետական մարմինների ներկայացուցիչներ:

# ԳՈՒԳԱՐԱՑ թեմում

## «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը մասնակցեց փողային նվագախմբերի հանրապետական մրցույթ-փառատոնին եւ նվաճեց 3-րդ տեղը

Նոյեմբերի 30-ին Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում մեկնարկվեց Է. Խաչատրյանի անվան փողային նվագախմբերի հանրապետական մրցույթ-փառատոնը: Տասնմեկ մասնակից համույթների թվում էր նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը (գեղ. ղեկավար եւ խմբավար՝ Մելսիկ Մատինյան, խորհրդատու ղեկավար՝ Վլադիմիր Ռապացկի), որն էլ արժանացավ 3-րդ պատվավոր տեղին՝ զիջելով ճոխ նվագարաններով առավել փորձառու խմբերին: Այս փուլում հաղթանակած փողային նվագախմբերը կմասնակցեն դեկտեմբերի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայանալիք գալա-համերգին, որի ընթացքում եւ կհանձնվեն մրցանակները:

Նվագախումբը փառատոնին հանդես եկավ Գրիգորյանի «Սասունցիների պար», Օֆենբախի «Օրփեոսը դժոխքից» օպերետի նախերգանքի, Պաուլսի «Մեղեդի», Ֆուկի «Սլավոնական պոլկա» եւ Այվազյանի «Հայրենիք» (մշակումը՝ Վ. Ռապացկու) կատարումներով:

«Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը ստեղծվել է 2000թ. թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի անմիջական նախաձեռնությամբ: «Վարդանանց հետնորդներն» ամեն տարի իրենց մասնակցությունն են բերում հանրապետական ու մարզային փառատոններին, տարաբնույթ պետական, ժողովրդական եւ եկեղեցական տոնակատարություններին:

2003թ. նվագախումբը մասնակցել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում կայացած հանրապետական միացյալ փողային նվագախմբերի համերգին, 2005թ.՝ Փողային նվագախմբերի փառատոնին՝ արժանանալով պատվավոր 2-րդ տեղին: Այս տարի մայիսի 9-ին նբագախումբն իր մասնակցությունը բերեց Հաղթանակի զբոսայգում կայացած փողային նվագախմերի մեծ համերգին: «Վարդանանց հետնորդներ»-ի նվագարանների հնչյունների ներքո է 5 տարի շարունակ անցնում նաեւ «Ծիծեռնակ» ճամբարի առօրյան:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*




# Հաղորդագրություն

2006 թ-ի նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ սեմինար, որը կազմակերպել էին ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը եւ Գեւորգյան ճեմարանի տեսչությունը՝ «Հոգեւորականների իրազեկության բարձրացում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիմնահարցերի վերաբերյալ» ծրագրի շրջանակներում:

Սեմինարին մասնակցում էին ճեմարանի սաներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամներ, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներ: Սեմինարին ներկա էին նաեւ ՀԿՍ-ի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը եւ «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ ներկայացուցիչ Կարինե Հարությունյանը:

Զեկուցումներով հանդես եկան տեր Ղեւոնդ քհն. Մայիսյանը եւ Էդուարդ Հովհաննիսյանը (ՀՀ ԱՆ Հանրապետական ՁԻԱՀ-ի կանխարգելման կենտրոն): Արագածոտնի թեմի Թալինի հոգեւոր հովիվ տեր Ղեւոնդ քհն. Գափոյանը եւ Ռուս Եկեղեցու հայր Սերգեյ Գոնչարովը ներկաներին փոխանցեցին այդ ոլորտում ունեցած իրենց փորձը:

***

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանը մասնակցեց «Արժեքներ, կրոն, ինքնություն» թեմայով Եվրոպական Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների խորհրդաժողովին, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 12-ին եւ 13-ին Բրյուսելում (Բելգիա):

Խորհրդաժողովը կազմակերպված էր Եկեղեցիների Եվրոպական կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի կողմից եւ կրում էր «Հոգեւոր առաջնորդների օր» խորագիրը:

Խորհրդաժողովին իրենց մասնակցությունն էին բերել Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի անդամ 123 Եկեղեցիների եւ եվրոպական 30 երկրների մոտ 60 ներկայացուցիչներ:

Հայ Առաքելական Եկեղեցին անդրկովկասյան տարածաշրջանի միակ Եկեղեցին է, որ անդամակցում է Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսին:

***

Սույն թվականի նոյեմբերի 2-3-ը Մոսկվայում կայացավ միջազգային խորհրդակցություն՝ «Միջազգային քրիստոնեական դիակոնիայի միջոցները» խորագրով: Հանդիպումը կազմակերպվել էր Մոսկվայի պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Արեւելյան Եվրոպայի գրասենյակի եւ «Եկեղեցիների համատեղ գործունեություն» (Action Churches Together) կազմակերպության ջանքերով:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց այդ խորհրդակցությանը մասնակցեցին Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը եւ ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն պարոն Կարեն Նազարյանը:

*Մայր Աթոռ Ս. Էջմիածին*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

## Ի Տեր հանգչեց Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը

Ցավով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 9-ին, Երեւանում, ուղեղի կաթվածից ի Տեր հանգչեց Իրաքի Հայոց թեմի սպասավոր Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը:

* * *

Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը (ավազանի անունով՝ Հովսեփ) ծնվել է 1928թ., Իրաքի հյուսիսային շրջանի քրդական Զախո սահմանամերձ գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա 1944թ. տեղափոխվել է Մուսուլ եւ կրթությունը շարունակել տեղի Ազգային վարժարանում՝ միաժամանակ ծառայելով Մուսուլի Սբ. Էջմիածին եկեղեցում: 1970թ. ընտանիքով տեղափոխվել է Բաղդադ, ուր 1970թ. սկսած սպասավորել է առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1978թ. ձեռնադրվել է սարկավագ, 1984թ.՝ քահանա: 1985թ. սպասավորել է Բասրայի Սբ. Աստվածածին եկեղեցում, իսկ 1986թ. սկսած մինչեւ իր վախճանը եղել է Մուսուլի Սբ. Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվը: Իր բազմամյա հովվության ընթացքում արժանապատիվ տեր հայրը վայելել է ինչպես իր հոգեւոր հոտի եւ լծակից հոգեւոր եղբայրների սերն ու հարգանքը, այնպես էլ քույր եկեղեցիների հոգեւորականության համակրանքը: Նվիրյալ եւ վաստակաշատ ծառայության համար Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան 2000թ. շնորհել է ծաղկյալ փիլոն կրելու իրավունք, իսկ 2004թ.՝ ավագության պատիվ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնուց ի վեր՝ տակավին հետառաքելական շրջանից սկսած, աստվածահաստատ Հայոց Ս. Եկեղեցին որդեգրել է խոստովանանքի կարգը՝ իր առանձնական եւ ընդհանրական մասերով՝ իբրեւ անքակտելի ծիսակարգ Ապաշխարության սրբասուրբ խորհրդի:

Անհատական խոստովանության ժամանակ քրիստոնյա հավատացյալը, ով նախապես գիտակից զղջացել է իր ոչ աստվածահաճո կենցաղավարության համար, Ս. Եկեղեցու սպասավորի առջեւ հիշատակում է այն բոլոր հանցանքները, որոնք անձնապես կատարել է իր կյանքի ընթացքում (իհարկե, որքանով ի վիճակի է մտաբերել): Իսկ Բարձրյալ Աստծո քահանան, լսելով իր հոգեզավակի անխաբ խոստովանանքը եւ տեսնելով նրա անկեղծ ապաշխարանքը, քրիստոսատուր անկապտելի իշխանությամբ թողություն է շնորհում նրա մեղքերին:



Հույժ անհրաժեշտ ենք համարում նշել, որ նա, ով Քրիստոս Աստծո մեղսաքավիչ Ս. Արյամբ հավետ փրկագնվել է նզովյալ սատանայի հոգեսպան կապանքներից եւ Ս. Մկրտության շնորհահորդ Ավազանից վերստին ծննդյամբ դարձել Քրիստոսի Ս. Եկեղեցու սիրասուն ու անդավաճան զավակը, ընդունելով երկնաքաղաքացիության ծրիատուր շնորհը, առավելաբար կարիքն ունի հոգենորոգ այս խորհրդի: Ուստիեւ, նա պետք է խոհեմաբար ընտրի օծյալ, ուսյալ եւ սրբակյաց մի եկեղեցականի, որն էլ, դառնալով վերջինիս խոստովանահայրը (իմա՛ հոգեւոր ծնողը), ամոքիչ սպեղանիներով դարմանի իր մոլորյալ զավակի մեղսակիր եւ մահառիթ ախտերը: Եվ եթե անոգ ու անզոր հիվանդը կարիք ունի հմուտ եւ գիտակ բժշկի, ապա քրիստոնյան էլ որքան առավել կարիքն ունի խոստովանահոր: Խոստովանահայր ունենալը բնավ էլ ժամանակավրեպ չէ, ինչպես կարծում են ոմանք, այլ ճիշտ հակառակը՝ ժամանակի հրամայականն է:

Այսու, խոստովանահայրն իր հայրախնամ ու հոգեշահ խրատներով եւ Ս. Եկեղեցու բյուրեղյա ակունքներից սկիզբ առնող անխարդախ կաթով սնում է իր զավակին՝ նրա ընթացքն ուղղորդելով դեպի Երկնքի արքայություն: Այլեւ այդ քայլերն անգայթ ու անխոտոր է պահում, որպեսզի իր հոգեզավակը երբեք ու երբեք չսուզվի այս չար աշխարհի մեղսածուփ օվկիանոսում եւ չխաբվի ստապատիր գայթակղություններից ու որոգայթներից:

Հետեւապես, ճշմարիտ հավատացյալի հոգեւոր-աղոթական կյանքում էապես կարեւորվում է խոստովանության անգին դերը, ինչն իր անխամրելի դրոշմն է թողնում աստվածահավատ անձի ներհայեցողական կյանքի վրա:

Ասվածին հավելենք միայն, որ խոստովանահայրը պարտավոր է գաղտնի պահել խոստովանության ժամանակ բացահայտված բոլոր մեղքերը:

Ինչ վերաբերում է հրապարակային խոստովանությանը, ապա այն կատարվում է հավաքական ձեւով՝ ի սկիզբ կամ հընթացս Պատարագի:

Առաքելահիմն մեր Մայր Եկեղեցու աստվածընկալ եւ հոգելույս սհայրերը հորդորում են խոստովանել գոնե քառասուն օրը մեկ, քանզի «ով խոստովանում է՝ անքուն որդերը նրան չեն ուտի, անողորմ հրեշտակները նրան չեն տանջի, այլ Սուրբ Հոգով զարդարված ու փառավորված է եւ Ամենասուրբ Երրորդության հետ միավորված» (Վարդան վրդ. Այգեկցի), որին վայել է փառք եւ երկրպագություն հավիտյանս. ամեն:

*Արմեն դպիր ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի*
*Ե լսարանի սան*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ
## (1166-1173)

*Սկիզբը՝ թիվ 19-22*

Քաղաքական առումով Թեորիանոսի վերադառնալուն հաջորդող երկու տարիները նշանավորվեցին Ռուբինյան եւ Օշինյան իշխանությունների միջեւ ծագած նոր գժտությամբ, որը կրկին հաջողվեց հարթել Ներսես Շնորհալու՝ հաշտարար պատվիրակություն ուղարկելու միջոցով: Դրանից առաջ նրանք մի անգամ էլ հաշտվել էին՝ ամուսնացնելով Թորոսի աղջկան Օշինի անդրանիկ տղայի՝ Հեթումի հետ: Սակայն Հեթումը, որ 1169 թվին իշխանության գլուխ էր եկել, ատում էր կնոջը, բայց Թորոսից ահաբեկված՝ ծպտուն չէր հանում: Թորոսի մահից հետո համարձակություն ձեռք բերեց եւ կնոջն իր տնից վռնդեց: Մլեհը, որ ինչպես տեսանք, շատ էլ հաշտ չէր իր եղբոր հետ, այնուամենայնիվ որոշեց իր տոհմի պատիվը պաշտպանել, քանի որ եղածը թշնամության դրսեւորում համարեց: Նա պաշարեց Լամբրոնը, բնակիչներին նեղեց սրով ու սովով, եւ Հեթումը, տեսնելով, որ հույներից էլ օգնություն չի ստանում, ստիպված եղավ ծանր պայմաններով հասնել պաշարման վերացմանը: Հաշտությունը կնքվում է Գրիգոր Տղա եպիսկոպոսի միջնորդությամբ: Դրանից հետո Մլեհը հինավուրց Փլաբիուպոլիս քաղաքի տեղում կառուցեց Սիս քաղաքը՝ վերածելով այն մայրաքաղաքի: Հարկ է նշել, որ մինչեւ Մլեհը՝ Ռուբինյան իշխանապետերն աթոռանիստներ էին դարձրել Կոպիտառը, Բարձրբերդը, Վահկան, Անարզաբան, Մամեստիան, եւ հաստատուն մայրաքաղաք չունեին: Մլեհը լուծեց այդ խնդիրը, եւ Սիսը՝ որպես մայրաքաղաք, ծառայեց մինչեւ թագավորության անկումը: Մլեհը, սակայն, իր վարքագծով համակրելի չէր, իսկ նրա վարած քաղաքականությունը



միշտ չէ, որ հասկանալի էր շրջապատողներին: Նա կարող էր դաշնակցել լատինների հետ՝ ընդդեմ այլազգիների, սակայն նույն հաջողությամբ կարող էր կռվել իր հարեւան քրիստոնյա տիրակալների հետ՝ դաշնակցելով այլազգիներին: Նպատակը միայն ու միայն իր իշխանության ուժեղացումն էր ու տարածքային ընդարձակումը: Նա անգամ դրամ հատեց մահմեդական իշխանների հետ, որի մի երեսին խաչն էր պատկերված, իսկ մյուսին՝ իսլամական կիսալուսինը: Իր քաղաքականությանն ընդդիմացողներին նա խստորեն պատժում էր՝ նետելով նրանց բանտ, շատ եպիսկոպոսների ատամները ջարդելով եւ անգամ համեստ կանանց խայտառակելով: Բոլոր հնարավոր դեպքերում դրամը հարքունիս էր գրավում, ըստ պատմիչի, հարստանալով՝ անմեղներին զրկելով: Այս ամենի արդյունքում լավ չդասավորվեցին Մլեհի եւ Ներսեսի հարաբերությունները, որոնք նորմալ զարգանալու դեպքում հայ ժողովուրդը մեծապես կշահեր:

Մինչ այսպիսին էին գործերը Կիլիկիայում, 1172 թվին՝ հավանաբար տարվա վերջին, կրկին Հռոմկլա եկան Թեորիանոս մագիստրոսը եւ Հովհաննես Ութման վանահայրը՝ բանակցությունները շարունակելու եւ հաջողությամբ ավարտելու հանձնարարությամբ: Նրանք իրենց հետ բերել էին Մանվել կայսեր եւ Միքայել պատրիարքի նամակները եւ բանաձեւված առաջարկությունների՝ 9 բաժնից բաղկացած մի ցուցակ: Կայսրն իր նամակում մերժում էր մի բնության խնդիրը, թեկուզեւ այդ կիրառել էր Կյուրեղ Ալեքսանդրացին, եւ առաջարկում էր հայերին ժողով գումարել եւ ընդունել 9 առաջարկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելացնել ուրիշները: Միքայել պատրիարքն էլ իր հերթին կամենում է միության խնդիրն առաջ քաշել՝ գտնելով, որ հայերը պետք է միաբնակության մոլորությունից ետ կանգնեն, իսկ Բյուզանդական Եկեղեցին պատրաստ է նրանց ընդունել իր գիրկը: Իրողությունն այն է, որ առաջարկված 9 գլուխները նպատակ ունեին Հայոց Եկեղեցին ենթարկել Բյուզանդականին, եւ հույները, Թեորիանոսի կողմից հարցը սխալ ներկայացնելու պատճառով, միամտորեն կարծում էին, որ Ներսեսը հանուն Եկեղեցիների միության պատրաստ է Հայոց Եկեղեցին ենթարկել արմատական փոփոխության: Իսկ որո՞նք էին 9 գլուխները: Դրանց համաձայն՝ պետք է նզովվեին միաբնակության կողմնակիցները եւ անվանապես Եվտիքեսը, Դիոսկորոսը, Սեւերիանոսը եւ Տիմոթեոսը, դավանեին Քրիստոսի երկու բնությանը, «Սուրբ Աստուած»-ից պետք էր վերցնել միջանկյալ «եւ»-ը եւ «որ խաչեցար» բառերը, Աստվածահայտնության տոնը կատարել հույների հետ միասին,



Ավետումը՝ մարտի 25-ին, Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, Թլփատությունը՝ հունվարի 1-ին, Մկրտությունը՝ հունվարի 6-ին, եւ Տյառնընդառաջը՝ փետրվարի 2-ին: Առաջարկվում էր փոխել նաեւ տերունական բոլոր տոները՝ սուրբ Աստվածածնի եւ սուրբ Կարապետի, սուրբ առաքյալների եւ մյուս սրբերի, որով փաստորեն վերջ կգտներ հայերի հատուկ յոթնեկական կացությունը: Պահանջվում էր, որ մյուռոնը պատրաստվի ձիթայուղով, պատարագի ժամանակ խմորուն հաց եւ ջրախառն բաժակ օգտագործել, պատարագի եւ այլ պաշտամունքների ժամանակ ժողովրդին եկեղեցում պահել՝ առանձնացնելով ապաշխարողներից, ընդունել Քաղկեդոնի, Կոստանդնուպոլսի երկրորդ ու երրորդ եւ Նիկիայի երկրորդ ժողովների որոշումները, ինչպես նաեւ կաթողիկոսների ընտրությունը կատարել կայսեր համաձայնությամբ:

Այդ առաջարկները պարզապես անընդունելի էին: Կրկին Ներսես Շնորհալին պատվիրակներին պատասխանեց, որ այդ հարցը չի կարող վճռվել առանց ազգային ժողովի եւ բուն Հայաստանի եպիսկոպոսների ու վարդապետների համաձայնության, իսկ ժողով դեռ չի գումարվել, քանի որ սպասում էին հայերի առաջարկին, իսկ ձմեռային պայմաններում անհնար է ժողով գումարել: Ներսեսը, խոստանալով ամեն ինչ անել, կայսրին եւ պատրիարքին նամակներ գրեց եւ պատվիրակներին տալով՝ նրանց ուղարկեց Կոստանդնուպոլիս: Կայսրին ուղղված նամակում հատուկ ասվում էր, որ «աւանդութիւնն եկեղեցւոյ մեր զոր ունիմք ի վկայութենէ Աստուածաշունչ գրոց հաստատեալ է»՝ ակնարկելով բնությունների խնդիրը: Նա գրում էր, որ հայերը պիտի ձգտեն գնալու զիջողությունների, բայց ոչ որպես ճշմարտության վերադարձող մոլորյալներ: Հատուկ նշվում էր, թե ինչ հարցերում չեն կարող զիջման գնալ, եւ ասվում, որ եթե հույներն իրոք ձգտում են միաբանության, ապա պետք է գայթակղության պատճառ հանդիսացող կետերից հրաժարվեն: Նա խոստանում է այդ կետերը ժողովում քննել եւ հատուկ պատվիրակությամբ հայտնել հույներին, որով զրկում է վերջիններիս նոր պատգամավորություն ուղարկելու հնարավորությունից: Հարկ է նշել, որ նա հայտնում է իր մտադրությունը՝ ժողովն առանց հույների մասնակցության անցկացնելու մասին: Ինչ վերաբերում է Միքայել պատրիարքին ուղղված նամակին, ապա նրանում նա գեղեցիկ արտահայտություններով գովում է միությունն իրականացնելու խնդիրը, դրա ուղղությամբ ձեռնարկված քայլերը եւ հայտնում իր ցանկությունը՝ անօգուտ բանակռվին եւ սնոտի հաղթասիրությանը վերջ տալու մասին, որից Եկեղեցին օգուտ չի ստացել: Սակայն ամենաուժեղ պահանջն այն է, որ նա առաջարկում է հույներին նույնպես հանդիսական ժողով գումարել եւ պատասխան տալ հայոց ժողովի առաջարկություններին:

Թեորինոսի եւ Հովհաննեսի մեկնելուց հետո, համաձայն Լամբրոնացու, Ներսես Շնորհալին ժողով գումարելու հրաման է արձակում: Սակայն, որքան էլ զարմանալի լինի, միայն Թեորիանոսին հայտնել էր, որ ժողովի գումարման հարմար ժամանակն ամառն է: Բայց գործնականում ոչինչ չարվեց, եւ երբ օգոստոսին Ներսես Շնորհալին մահացավ, ժողով գումարելու ոչ մի նշան չէր երեւում: Ներսեսի մահվան առիթով կայսեր ուղարկած ցավակցող պատգամավորությունը ոչ մի ակնարկ չի անում կայացող կամ կայանալիք ժողովի վերաբերյալ, իսկ հայոց կաթողիկոսի հաջորդը կայսերն ուղարկած պատասխան նամակում դիտողություններ է անում ինը գլուխների վերաբերյալ, սակայն ոչինչ չի ասում ժողով հրավիրելու կամ ժողովում հիշյալ գլուխները քննարկելու մասին: Այս ամենը ցույց է տալիս, որ Ներսես Շնորհալին միշտ ցուցաբերում է խոհական եւ զգուշավոր ընթացք, ձեւ է անում, թե ժողով է գումարելու, սակայն պարզապես այն չի հրավիրում: Կատարածուն ընդամենը Հայաստան Ստեփանոս վարդապետին ուղարկելն էր, որը պետք է տեղեկություն հաղորդեր բանակցությունների եւ հույների առաջարկած ինը գլուխների մասին:

Հայոց կաթողիկոսը, ելնելով հայ ժողովրդի իրոք ծանր կացությունից, աշխատում էր դյուրացնել միության կայացումը, սակայն տեսնում էր միաժամանակ դրա անհնարինությունը բյուզնադացիների բռնած դիրքի պատառով: Այս ամենը հյուծեց նրան, եւ նա 1173 թվի օգոստոսին կնքեց իր մահկանացուն: Լամբրոնացին նրա մահը բացատրում է ճգնավորության պատճառած տկարությամբ, զանազան հիվանդություններով, որոնք գլուխ բարձրացրին ամառվա տապի պատճառով: Նա վախճանվեց 73 տարեկան հասակում: Նրա մարմինը հողին հանձնվեց Գրիգոր Ապիրատ եպիսկոպոսի գլխավորությամբ՝ Հռոմկլայի կաթոլիկների մոտ՝ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի գերեզմանի հարեւանությամբ: Հուղարկավորության ժամանակ դրվատանքի ելույթով հանդես եկավ Ներսես Լամբրոնացին:

*Շարունակելի*

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 1
5-18, 20-22, 24,
2006-ի թիվ 1-5, 11-19, 21-22*

## ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ

Ըստ ավանդության՝ Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան է բերել այն գեղարդը, որով խոցեցին խաչված Քրիստոսին, իսկ Բարթողոմեոս առաքյալը՝ Տիրամոր պատկերը: Մինչեւ 1900-ական թվականների սկզբները տարածված հիվանդությունների եւ համաճարակների ժամանակ հրաշագործ գեղարդը դուրս է հանվել Մայր Աթոռից եւ տարվել համապատասխան վայրերը. հրաշքով անմիջապես դադարել են հիվանդությունները: Այս նպատակով սուրբ գեղարդը տարվել է նաեւ Վրաստան՝ վրաց ժողովրդի խնդրանքով: Սբ գեղարդը նախապես պահվում էր Գեղարդավանքում, սակայն հետո այն տեղափոխել են Մայր Աթոռ, եւ այժմ Քրիստոսի կողը խոցած գեղարդը ցուցադրվում է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում՝ ի տես աշխարհի բոլոր մարդկանց: Մեր Եկեղեցին այս գեղարդի մասնակցությամբ է կատարում նաեւ մյուռոնօրհնության սրբազան արարողությունը:

## ԽԱՉԻ ՄԱՍԻՆ



Քրիստոնեության մեջ մեծ տեղ է գրավում խաչը: Սակայն ոմանք թերահավատությամբ ասում են, թե ինչպե՞ս կարելի է մեծարել այն գործիքը, որով սպանություն են գործել: Քրիստոսի արյունը սրբարար է եւ հոսելով խաչի վրա՝ սրբացրեց այն: Բացի դրանից, մահվան այս գործիքը Քրիստոսի զոհաբերությամբ դարձավ բանալի, որով բացվեցին երկնքի արքայության դռները: Ահա այս վերջինով է, որ խաչը մեծ արժեք է ձեռք բերել: Որոշ աղանդավորներ ընդհանրապես մերժում են խաչը՝ կարծես վախենալով դրանից, եւ հերքում Քրիստոսի հենց խաչի վրա մահին ընդունելու պարագան: Այստեղ չենք կամենում ծավալվել եւ աստվածաշնչյան մեջբերումներով ու պատմական փաստերով ապացուցել, որ այն ժամանակ հռոմեական մեծագույն պատժամիջոցներից մեկը մարդկանց խաչի վրա գամելն էր, այլ պարզապես ցանկանում ենք բոլորին զգուշացնել՝ մի՛ մոլորվեք ոմանց դատարկ խոսքերից, որոնք դեռ նոր ծլած՝ խոսում են իրենցից դարեր առաջ եղածի մասին՝ չունենալով ո՛չ ճշմարիտ ավանդություն, ո՛չ ճշմարիտ հավատք ե՛ւ ոչ էլ ճշմարիտ աստվածպաշտություն: Մինչդեռ Եկեղեցին ոչ թե նոր է ձեւավորվել, այլ սկիզբ է առել առաքելական ժամանակներից եւ շարունակաբար եկել հասել է մինչեւ մեր օրերը: Խաչի հանդեպ այս սուրբ զգացումը երեւում է ոչ միայն խաչին վերաբերող եկեղեցական տոների, այլեւ մեր ողջ ճարտարապետության, մանրանկարչության, գորգարվեստի, արծաթագործության, խեցեգործության, հետագայում նաեւ հաստոցային նկարչության մեջ: Դրա մեծագույն վկան են նաեւ մեր բազում խաչքարերը, որոնք սփռված են Հայաստան աշխարհով մեկ եւ կարծես իրենց քարե լռությամբ, բայց եւ դարերը հաղթհարող իրենց մշտատեւությամբ, բաց երկնքի տակ, ի լուր ամենքի գոչում են Պողոս առաքյալի խոսքերը. «Քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»:

Քրիստոսի խաչը պարսիկներից ետ վերադարձնելուց հետո, որպեսզի խաչափայտն այլեւս նման վտանգների չենթարկվի, որոշվեց այն մանր կտորների վերածել եւ բաժանել բոլոր քրիստոնեական Եկեղեցիներին:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ

## ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՀՂԱՑՄԱՆ ՏՈՆԸ

> *«Յայսմհետէ երանիցեն ինձ ամենայն ազգք»*
>
> *(Ղուկ. Ա 48)*

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեծ հարգանք տածելով Սուրբ Մարիամ Աստվածածնի նկատմամբ, իր տոնացույցում զգալի տեղ է հատկացրել նրան: Աստվածածինը՝ որպես մեծագույն բարեխոս Աստվածորդու առջեւ, իր ուրույն տեղն ունի յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում:

Պատմական ավանդությունը վկայում է, որ Մարիամ Աստվածածնին նվիրված տոները հաստատվել են 5-րդ դարից սկսած: Հայկական ծեսում չորեքշաբթին Մարիամ Աստվածածնին նվիրված օրն է, որովհետեւ, ավանդության համաձայն, ինչպես Եվայի անհնազանդությունը, այնպես էլ Տիրամոր Ավետումը տեղի է ունեցել չորեքշաբթի օրը, քանզի այդ օրը Եվայի միջոցով աշխարհ մտավ անեծքը, իսկ Աստվածածնով՝ Շնորհը, Լույսը եւ Փրկությունը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Աստվածամոր հիշատակի համար սահմանել է յոթ տոն՝ Սուրբ Կույս Մարիամի հղացման, Ծնունդը, Ընծայումը, Ավետումը, Վերափոխումը, Տուփի գյուտը եւ Գոտու գյուտը, որոնցից Վերափոխումը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից է:

Սուրբ Կույս Մարիամի հղացման տոնը հիշատակելով՝ մենք Քրիստոսի մարդեղության առաջին տնօրենությունն ենք նշում, երբ Աստծո հրեշտակը հայտնեց Սուրբ Աստվածածնի ծնողներին, որ Աննան կհղիանա եւ կծնի այն անարատ կույսին, որից Քրիստոս Փրկիչը պետք է մարմնանա: Հղության այս գեղեցիկ տոնը բոլոր Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիները նշում են դեկտեմբերի 9-ին, իսկ կաթոլիկները՝ դեկտեմբերի 8-ին:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մայրը՝ ամենագովելի Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը, ինչպես վերը նշեցինք, աստվածատուր է եւ որովայնից ընտրյալ զավակ: Մարիամը սերում է քահանաների եւ թագավորների տոհմից. հայրը՝ Հովակիմը, Հուդայի թագավորական ցեղից էր, ամենքի կողմից սիրված եւ հարգված մարդ՝ «այր բարեպաշտ եւ երկիւղած ի Տեառնէ»: Իսկ մայրը՝ Աննան, Ղեւիի քահանայական ցեղից էր, հետեւաբար Մարիամ Աստվածածնի զավակը ե՛ւ թագավոր է, ե՛ւ քահանա՝ համաձայն հետեւյալ խոսքի. «Դու հավիտյան Քահանա ես, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. Ե 6), եւ «Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը, եւ Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա» (Ղուկ. Ա 32):



Հովակիմն ու Աննան, ընդհուպ մինչեւ խոր ծերություն, դեռեւս չէին ճաշակել զավակ ունենալու բերկրանքը: Պատճառն Աննայի ամլությունն էր, որը խորապես տրտմություն էր առաջացրել նրանց հոգում: Սակայն նրանց տրտմությունն ավելացավ այն ժամանակ, երբ բարեկամներից ու քահանաներից սրտի մխիթարություն գտնելու փոխարեն՝ բազում նախատինքներ էին ստանում:

Մի օր էլ, երբ Իսրայելի որդիները գնացին Երուսաղեմի տաճար՝ Աստծուն զոհ մատուցելու, Հովակիմն էլ նրանց հետ էր, եւ Ռուփիմ քահանան նախատեց եւ ամաչեցրեց նրան՝ ասելով. «Դու իրավունք չունես առաջինն ընծաներ մատուցելու Աստծուն, որովհետեւ Իսրայելի մեջ զավակ չունես»: Հովակիմը խոցված հոգով եւ թախծոտ սրտով մեկնեց Երուսաղեմից՝ մենության մեջ իր վիշտը լալու Աստծու առաջ: Գնաց լեռները՝ հովիվների մոտ՝ որոշելով այլեւս տուն չվերադառնալ եւ չուտել ու չխմել, մինչեւ Աստված չայցելի իրեն: Այնտեղ հաստատելով իր վրանը՝ ինքն իրեն ասաց. «Չեմ իջնի տունս եւ չեմ ուտի ու չեմ խմի, մինչեւ որ իմ Տեր Աստվածն ինձ այցելի. աղոթքս թող ինձ կերակուր լինի եւ արտասուքս՝ ըմպելիք»:

Իսկ սրբուհի Աննան, իմանալով իր ամուսնու ուշացման պատճառը, կրկնապես սկսում է ողբալ ու ասել. «Թող լամ իմ այրիությունը, թող լամ նաեւ իմ անզավակությունը»: Այնուհետեւ Աննան սգո հանդերձներ հագավ եւ օրերով ողբում էր իր ամլության համար: Եվ ահա օրերից մի օր Սուրբ Աննան իջնում է իր տան պարտեզը եւ նստում դափնու ծառի տակ եւ սկսում բարձր ձայնով աղոթել. «Ո՛վ մեր հայրերի Տեր Աստված, հիշի՛ր տառապանքս եւ օրհնի՛ր ինձ, ինչպես օրհնեցիր մեր արդար հորը՝ Աբրահամին Սառայի միջոցով եւ նրան զավակ պարգեւեցիր»: Այդ ժամանակ նա դափնու ծառի վրա ճնճղուկի երկու բույն տեսավ ու սկսեց մեծապես ողբալ եւ ասել. «Ո՞վ ինձ ծնեց, կամ ո՞ր մեկն ինձ մայր երկնեց, քանի որ անեծքով ծնվեցի ես Իսրայելում եւ նախատինք եղա մեր Տեր Աստծու տաճարի մեջ: Վա՛յ ինձ, ես ո՞ր մեկին նմանվեցի, ո՛չ երկրի գազաններին, ո՛չ էլ երկնքի թռչուններին, որովհետեւ երկնքի թռչունները ձագեր ունեն Տիրոջ առաջ, եւ գազաններն ու անասունները ծննդկան են Քո առաջ: ... Վա՛յ ինձ, ես ո՞ւմ նմանվեցի, ո՛չ էլ անգամ երկրի հողին եմ նման, որովհետեւ երկիրն էլ իր պտուղն է մատուցում մարդկանց որդիներին, եւ նրանք օրհնում են Քեզ, Տե՛ր»:

Եվ նույն ժամին Տիրոջ հրեշտակը երեւաց Աննային եւ ասաց. «Աննա՛, Աննա՛, Աստված լսեց քո աղոթքները: Ահա պիտի հղիանաս եւ մի մանուկ պիտի ծնես, եւ Նրա անունն ամբողջ երկրում պիտի հռչակվի»: Եվ Աննան ասաց. «Կենդանի է իմ Տեր Աստվածը, եթե մի զավակ ծնեմ, նրան Տեր Աստծուն ընծա պիտի մատուցեմ՝ Սամվելի մոր՝ Աննայի օրինակի համաձայն, եւ կյանքիս բոլոր օրերին զավակս Աստծո տաճարի պաշտոնյա պիտի լինի»:

Տիրոջ հրեշտակն իջավ նաեւ նրա ամուսնու մոտ եւ ասաց. «Հովակի՛մ, Աստված լսեց քո աղոթքը, իջի՛ր տունդ, եւ քո կինը՝ Աննան, պիտի հղիանա, եւ ամբողջ երկրում ձեզ ցնծություն պիտի լինի»: Հովակիմը հույժ ուրախացած օրհնում է Աստծուն եւ գոհանում Նրանից, ապա վերցնելով ընտիր տասը ոչխար՝ Տիրոջն ընծայելու համար, տասներկու զվարակ՝ քահանաների ու ծերերի համար, եւ հարյուր այծ էլ՝ ժողովրդի համար: Եվ երբ Հովակիմն իր ընծաները մատուցեց Աստծուն, նրա կինը՝ Աննան, հղիացավ: Հետագայում Աննային տրվում է հնարավորություն՝ տեսնելու Աստվածորդուն, սակայն աստվածատեսության ուրախությունը չկարողացավ կիսել իր ամուսնու հետ, քանի որ Հովակիմն արդեն հանգել էր ի Տեր:

Այս տոնի կապակցությամբ Հայսմավուրքում թվարկվում են այն բարիքներն ու առաքինությունները, որ այս հղությունը պարգեւեց աշխարհին:

- «Աննան հղիացավ եւ ավետիս էր տալիս իր դրացիներին եւ բարեկամներին՝ այսուհետեւ ես անզավակ չեմ»:
- «Աննան հղիացավ ամենաօրհնյալ մանկանը, որից օրհնվեցին բոլոր ազգերը»:
- «Աննան հղիացավ, եւ որից օրհնվեց Եվան»:
- «Աննան հղացավ Նրան, որով Ադամին տրված անեծքը մեջտեղից վերացավ»...

Եվ այսպես երկարում է «հղացավ»-ների շարքը, որոնցով կանանց երկունքը լուծվեց, շնորհ սփռվեց ողջ աշխարհի վրա, անեծքն օրհնության փոխվեց, կյանքի ծառը երկրի վրա տնկվեց:

Ինչպես նշեցինք, մենք այս տոնն անխախտ կերպով կատարում ենք դեկտեմբերի 9-ին, իսկ կաթոլիկները՝ դեկտեմբերի 8-ին: Եվ ինչպես պատմությունն է վկայում, Մարիամի հղության այս տոնը Կաթոլիկ Եկեղեցին իր կարեւորագույն տոների դիրքին է բարձրացրել: Իսկ Թ դարում Կաթոլիկ Եկեղեցին, հետեւելով Պելագյոսի գաղափարներին, սկսեց դավանել Սուրբ Կույսի անարատ հղության վարդապետությունը եւ ծնունդը՝ Հովակիմից եւ Աննայից, բայց հետո հրաժարվեց այդ դավանանքից: Սակայն մոտ հազար տարի անց՝ 1854-ին, Պիոս IX Պապը կրկին ընդունեց եւ կանոնականացրեց այդ սկզբունքը՝ դավանելով, որ Սուրբ Կույսը ծնվել է Հովակիմից ու Աննայից՝ առանց ադամական մեղքի: Այս է Լատին Եկեղեցու «Անարատ հղության» վարդապետությունը: Լատին Եկեղեցին հիմնականում հիմնավորում է «Անարատ հղության» վարդապետությունը՝ հիմնվելով Ծննդոց Գ 15, Ղուկ. Ա 28 եւ ուրիշ համարների վրա:

«Ողջույն քեզ, ով շնորհընկալ Կույս, Տերը քեզ հետ է. դու օրհնյալ ես կանանց մեջ» (Ղուկ. Ա 28): Ըստ կաթոլիկների՝ այս առանձնաշնորհումը պիտի արտահայտվեր նրա անարատ հղությամբ, մինչդեռ Աստվածամոր մեծությունն այն է, որ նա ի սկզբանե աստվածային նախախնամությամբ դարձավ գլխավոր եւ գործուն մասնակիցը Աստծո փրկության ծրագրի իրականացման համար:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ էջ 3*

Հայ Առաքելական Եկեղեցուն տրված խաչափայտի այդ մասունքը պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Իջման Սուրբ Սեղանի վրա:

Քրիստոսը դիպչելով կենդանություն էր պարգեւում: Ահա այդ զորությամբ էլ Քրիստոսը սրբացրեց խաչը: Եվ մենք այս գիտակցությամբ է, որ մեծ ակնածանք ենք տածում խաչի հանդեպ:

Խաչը փոխաբերական իմաստով դարձել է նաեւ մեղքերից ազատվելու ճանապարհ: Երբ մարդը, իրեն չարչարանքների մատնելով, հրաժարվում է մարմնի ստոր, բայց հույժ ցանկալի կրքերից, մտովի ասես ինքն իրեն խաչում է: Սակայն այս նեղ ճանապարհը հետագայում դառնում է քաղցր եւ ցանկալի: Մեր Եկեղեցու սրբերից մեկն ասում է, որ սատանան տարբեր չար սերմեր է ցանում մարդկանց մեջ: Թագավորների եւ իշխանավորների մեջ սերմանում է գոռոզություն, նախանձ եւ կռիվ, վաճառականների մեջ՝ խաբեություն, արհեստավորների մեջ՝ ստախոսություն, որպեսզի վատ գործը գեղեցիկ ցույց տան եւ լավ գնով ծախեն, որովայնամոլների մեջ՝ հարբեցողություն, կանանց մեջ՝ պճնասիրություն, որպեսզի մարդկանց հոգիները գերեն եւ մատնեն սատանային, շատ կանանց մեջ էլ՝ շատախոսություն, որպեսզի հատկապես եկեղեցում զրուցեն ու աղմուկ հանեն եւ այլն: Սակայն այս ամենի մեջ ամենամեծ մեղավորը մենք ենք, որ ցանված մեկ սերմի դիմաց բազում պտուղներ ենք տալիս: Եվ ահա խաչի տոները հատկապես հիշեցնում են մեզ խաչով փրկվելու անհրաժեշտությունը, խաչի ճանապարհին ընտրելը, այսինքն՝ մեր ստոր մտքերից ու ձգտումներից մեծ ջանքերի գնով հրաժարվելը:



### ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԽԱՐՈՒՅԿԻ ՄԱՍԻՆ

Տյառնընդառաջի խարույկի մասին քրիստոնեական կամ եկեղեցական որեւէ օրենք եւ կանոն գոյություն չունի: Հավանաբար այս սովորույթը հեթանոսական է եղել՝ կապված նորապսակների եւ բերքի օրհնության հետ: Քրիստոնեության տարածումից հետո ժողովրդական այս սովորույթին քրիստոնեական իմաստ է տրվել՝ առավելաբար շեշտելով աստվածային լույսի խորհուրդը: Այսօր այն տանը, ուր նորապսակներ կան, բակում կրակ են վառում: Վաղ շրջանում էլ մեր նախնիների մոտ այս սովորույթը եղել է, սակայն հատուկ ուշադրություն են դարձրել, որ տան խարույկը վառվի եկեղեցու խարույկից բերված կրակով: Եկեղեցական օրացույցում նշվում է, որ կրակի շուրջը պտտվելը դատապարտելի է, որովհետեւ եթե խարույկի մեջ տեսնում ենք քրիստոնեական իմաստ, ապա կրակի շուրջը պտտվելը զուրկ է այդ իմաստից եւ մեզ նմանեցնում է անմիտ եւ սնահավատ հեթանոսների:

### ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ

Երբ Ադամը դրախտում թմրեց, նրա կողից շինվեց Եվան, ու աշխարհը լցվեց բազում մարդկանցով: Նույն կերպ էլ Քրիստոս թմրեց խաչի վրա, եւ Նրա կողից արյուն եւ ջուր բխեց: Դրանցով շինվեց Եկեղեցին, որով բազում մարդիկ փրկության են արժանանում: Այս ամենն իմանալուց հետո մեզ համար արդեն շատ առումներով վերացական գաղափարի պես չի հնչում այն, որ ողջ տիեզերքը փրկվեց Քրիստոսի արյամբ: Մեր այս բացատրությունը ցանկանում ենք ավարտել ճշմարտությունը բացահայտող հետեւյալ գեղեցիկ նախադասությամբ. «Աստծո Որդին մարդ դարձավ, որպեսզի մարդու որդիները Աստծո որդիներ դառնան»:

*Շարունակելի*

**Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ**

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



*Սկիզբը՝ թիվ 17-22*

Պետք է նկատել, որ պատերազմական շրջանի հայ-թուրքական հարաբերությունների գեղարվեստական արտացոլման խնդրում Լեռ Կամսարն օգտագործել է օտյանական երգիծանքի որոշ միջոցներ: Օտյանի Փանջունին այնքան էր իրական ու առարկայական, որ Լեռ Կամսարն արդեն իրականության բոլոր ոլորտներում, մանավանդ քաղաքական-կուսակցական կյանքում ամեն քայլափոխի տեսնում էր նրան:

Վերհիշենք՝ ինչպես էր Օտյանի Փանջունին իր հրոսակախմբով արշավով երգում.

*Կռվեցե՛ք, տղե՛րք, կռվեցե՛ք քաջ-քաջ՝*
*Անվեհեր կանգնած թշնամու առաջ:*

Իսկ շրջակա գյուղերի հայ բնակիչները, լսելով նրանց մարտական խրոխտ քայլերգը, կարծում էին, թե նրանք հայության հայրենասիրական ոգու արտահայտությունն են եւ իրոք գնում են թշնամու դեմ կռվելու, նրանց համար ոչխար էին մորթում, ճոխ հյուրասիրություն կազմակերպում: Նույնիսկ երբ հարցնում էին՝ որ ուղղությամբ են կռվելու գնում, որ թշնամու դեմ են կռվելու՝ թուրքի՞, թե՞ քրդի, բազմանշանակ պատասխանում էին՝ հետո կիմանաք: Այնինչ իրականում նրանք գնում էին իրենց ազգակիցների դեմ կռվելու եւ գրավելու Բջիջ գյուղի Սուրբ Վարդանա վանքը եւ կողոպտելու այն: Փանջունու խելքն էր պետք՝ մտածելու համար, թե Վարդան Մամիկոնյանը ոչ մի կապ չունի հայոց պատմության հետ, ուստի վանքը պետք է ընկերվարության կամ սոցիալիզմի գաղափարական առաջնորդներից մեկի անունով կոչել Սուր Կրոպոտկինի վանք (այս մասին մանրամասն տե՛ս մեր «Երվանդ Օտյան. կյանքը եւ գործը» (Երեւան, 1996) մենագրության «Հայ քաղաքական երգիծանքի գլուխգործոցը՝ «Ընկ. Բ. Փանջունին» գլխում):

Լեռ Կամսարի երգիծվող հերոսները Փանջունու կրկնօրինակներն են՝ պատերազմական իրադրության մեջ, եւ նրանց անփութությունը, թափթփվածությունն ու անկազմակերպությունը, անձնականությունն ու շահամոլությունը պարզապես վերածվում էին ազգադավ գործունեության.

«Հայաստանը պոռաց իր ժամկոչ Ավետիս Ահարոնյանին «Ահազանգ»-ը տալ, որուն չվանին ծայրերեն բռնած էր արդեն ու կսպասեր: *Հնչեց «Ահազանգը», հայությունը թունդ առավ, ճակատ մնացած զինվորները տուն վազեցին ու սկսեցին բոլոր եռանդով… Հանգստանալ, սպաները քաղաք խուժեցին եւ օրիորդներու թեւերը մտան, հայտարարվեցավ ամեն ինչ զորքի համար:* Այս հրամանի զորությամբ *առուտուրն ու վաճառականությունը զորքի ձեռքն անցավ եւ ռուսին պահեստները հրապարակ թափվելով՝ սկսեցին վաճառվել: Զինվորները ապրանքները ճակատեն տուն կկրեին, կնիկներուն պահ կուտային ու վերստին ճակատ կդառնային՝* երգելով.

*Արշավենք , եղբա՛յրք դեպի Տաճկաստան,*
*Ջարդենք թուրքերն, փրկենք Հայաստան…»* (**Լեռ Կամսար,** Ազգային այբբենարան, էջ 71):

Այո՛, եղել են ազնիվ նվիրյաներ, առանց որոնց անձնուրաց կռվի ու հայրենասիրության տեղահանված ողջ արեւմտահայությունը պիտի բնաջնջվեր: Բայց եղել են նաեւ Օտյանի ու Լեռ Կամսարի տեսած այս տիպերը, որոնց իրական պատկերն ուրվագծել են մեր մեծ երգիծաբանները: Եվ վաղուց է հասկանալի դարձել, թե ինչու բոլշեւիկ պատմաբանները հայոց բանակի շարքերում թշնամու դեմ չկռվող, ռազմաճակատից փախչող հայ զինվորների դասալքությունը համարում էին ազնիվ հայրենասիրական ու ինտերնացիոնալիստական «վսեմ գործ»: Իսկ խորհրդային հայ ու այլազգի պատմաբաններից քանի՛-քանիսն են այդ ստորությունն արդարացնելու ճիգերի համար գիտական աստիճան ստացել մոսկովյան ԲՈՀ-ից:

Առաջին համաշխարհային պատերազմի եւ նրան հաջորդող տարիներին հայ-թուրքական հարաբերություններում իրավիճակը եւ պայմանները եղել են բացարձակ թուրքանպաստ: Նույնիսկ այն դեպքում, երբ հայերն ու վրացիները վերջապես որոշել են կռվել ու պաշտպանել իրենց տունն ու տարածքները, թուրքերն ունեցել են «մեծ տերությունների» բացահայտ հովանավորությունը: Այլապես ի՞նչ հանդգնությամբ պիտի թուրքն այնքան լկտիանար, որ հայտարարեր, թե «*դուք հող կռվեցեք, մինչեւ ես Արդահանն ու Սարիղամիշը առնեմ, գամ Կարսը գրավեմ*» (նույն տեղում, էջ 80):

Թուրքերի այսպիսի լկտիության եւ համաշխարհային հեղափոխության զառանցանքով ոգեւորված հայ որոշ բոլշեւիկների ազգադավ գործունեության պայմաններում ինչպե՞ս էին իրենց պահում հայերի ու Հայաստանի բարեկամ հորջորջված վրացիները: Մեր այդ «բարեկամները», որոնց մայրաքաղաքը կառուցվել ու բարգավաճել էր «հայերի կռնակով», մեր թիկունքում Հայաստանն իրար մեջ բաժանելու գաղտնի բանակցություններ էին վարում եւ համերաշխության դաշն էին կնքում թուրքերի ու ադրբեջանցիների հետ՝ բնավ չմտածելով, որ թուրքական քաղցկեղը, Արցախն ու Նախիջեւանը բռնազավթելուց հետո հենց իր սիրտն է մտնելու եւ ոչ հեռու ապագայում Վրաստանին ներկայացնելու է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլեւ քաղաքական ու տարածքային անամոթ պահանջներ:

Ինչպե՞ս Թիֆլիսում Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը 1918-ին կովկասյան միացյալ կառավարությունը՝ Սեյմը, ցրեցին, անկախացան ու Այսրկովկասում ստեղծեցին երեք նորելուկ, դեռեւս «չմկրտված» հանրապետություններ: Դարձյալ գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի թելադրանքով:

Գերմանիան միացյալ դահլիճից դուրս է կանչել Վրաստանին ու ականջին ինչ-որ բան փսփսացել: Խոժոռված Վրաստանը վերադարձել ու դահլիճից դուրս է վռնդել Հայաստանին ու Ադրբեջանին՝ հարուցելով սրանց խոր դժգոհությունը: Ռուսաստանը, որի հարվածներից վախենալով՝ փախչում էր թուրքը, այլ դիրք բռնեց իր երբեմնի հովանավորյալների նկատմամբ եւ նահանջելով՝ մերկացրեց թուրքական ճակատը՝ մինչեւ ատամները զինված թուրքի դեմ մենակ թողնելով անզեն հայ բնակչությանը: Հենց այստեղ էլ բացահայտվեց հայ-վրացական-ադրբեջանական բարեկամության բուն էությունը: Հայերն ու վրացիները, թուրքի դեմ ինքնապաշտպանական կռիվ մղելուց բացի, այլ ելք չունեին, ուստի բնական էր նրանց թեկուզ ժամանակավոր համագործակցությունը, որը շուտով վերածվելու էր սուր հակամարտության:

Իսկ Ադրբեջա՞նը, նա՞ ինչ դիրքորոշում ուներ.

«Դահլիճին մեջ սմքած նստած է Հայաստանը. դանակ զարկես՝ պուտ արյուն չի կաթեր: Վրաստանը երկու միտքի մեջ ընկղմեր, կերթեւեկե, իսկ *Ադրբեջանի վարի շուրթերը կդողան ժպիտեն:*

*Հայաստանն ու Վրաստանը կուզեն բան մը ըսել իրարու, բայց կնային Ադրբեջանին ու կքաշվին ըսելու: Վերջապես, Հայաստանը դարձավ Վրաստանին.*

*- Տղա՛, ի՞նչ կխորհիս, ի՞նչ ընենք:*

*- Չեմ գիտեր, ես ալ շաշմիշ եմ եղեր,-* պատասխանեց Վրաստանը:

*- Դո՞ւն ինչ կմտածես,-* դարձավ Հայաստանը Ադրբեջանին:

*- Դուք ինչ՝ ես ալ այն, մենք բոլորս մեկ տան զավակներ ենք,- ըսավ Ադրբեջանը շրթունքները կծելով:*

*- Մենք կկռվինք,-* վրա բերավ Հայաստանը՝ *փորձող հայացք մը նետելով անոր երեսն ի վեր,- իսկ դո՞ւն:*

*- Ես ալ կկռվեի, եթե զենք գործածել գիտնայի. կյանքիս մեջ բնավ զենք չեմ առեր ձեռքս: Վախնամ գնդակը պարպելուս սխալմամբ քեզի առնե, ինչու որ նշան չեմ բռնիր:*

*(Ադրբեջանին ենթադրությունը իրականացավ վերջեն. ինչքան որ հրացանը Տաճիկին բռնեց՝ միշտ հայուն դպավ):*

Վրաստանն ու Հայաստանը հոս առաջին անգամ զգացին, որ *մենակ են*» (նույն տեղում, էջ 70-71, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Լեռ Կամսարի քաղաքական երգիծանքն արդիական է այսօր էլ, որովհետեւ անկախացած Վրաստանն ու Ադրբեջանն այսօր էլ հետեւողականորեն կրկնում են նույն քաղաքականությունն ընդդեմ Հայաստանի:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ

## ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՀՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

*Սկիզբը՝ էջ 4*

Տիրամայրը օրինակ եղավ մեզ համար իր հավատով, Աստծո խոսքի հանդեպ իր վստահությամբ եւ խոնարհությամբ: Սակայն ինչպես Հայ, այնպես էլ Արեւելյան մյուս Եկեղեցիները մերժում են Կաթոլիկ եկեղեցու «Անարատ հղության» պաշտոնապես հաստատված վարդապետությունը եւ ընդունում են, որ Սուրբ Կույսը ծնվել է ադամական մեղքով, սակայն աստվածային մեծ ուխտի կատարման համար վայելել է մի առանձին շնորհ, յուրահատուկ օրհնություն, որովհետեւ Աստվածորդու մայրը պետք է լիներ: Նաեւ հղության ժամանակ Ս. Հոգին Մարիամին ազատել է իր մեղավոր բնությունից, որպեսզի Տիրոջը կրի շնորհի կատարելության մեջ: Այդ առանձնաշնորհի մասին տեղեկություն ենք քաղում Ղուկասի Ավետարանի հետեւյալ հատվածից. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ դու Աստծուց շնորհ գտար» (Ղուկ. Ա 30): Ս. Կույսը՝ իբրեւ տիեզերական փրկագործական տնօրենության անմիջական մասնակից, կուսական մայրությամբ վերափոխեց աշխարհը՝ դառնալով բոլոր «ողջերի» ճշմարիտ մայրը:

Արդ՝ Հղացման տոնն ապագա մայրերի լուսավոր յալ եւ մաքրամաքուր կյանքի առհավատչյան է՝ իր մեջ ներառած աստվածային գերագույն սրբության իմանալի խորհրդի հավիտենականությունը:

***Սարգիս ԱԲՅԱՆ***
***Սարգիս ԹՈՎՄԱՍՅԱՆ***
***Սեւանի Վազգենյան ճեմարանի Բ լսարանի սաներ***

# ԱՄԵՆԱՄԱՅՐ՝ ԻՄ ՏԻՐԱՄԱՅՐ

*Տիրամա՛յր Լույսի,*
*Ակաթե աղբյուր՝ մայրական սիրո ու նվիրումի,*
*Ապավինություն ու քնքշանք բարի:*
*Բոլոր որբացած,*
*Ցավից խեղճացած,*
*Անճարությունից մոլության տրված*
*Ու կարիքի մեջ Քեզ ու Քո Մանկան հզոր ու բարի*
*պատկերին փարված,*

*Աղերսանքների խորանին գամված*
*որբուկների մայր…*

*Տեղեկացված ես մեզնից ավելի,*
*Որ մեծ տարածությամբ բաժանվածները՝ հորից ու մորից,*
*որբ են անվանվում,*

*Ուրեմն՝ թափուր աստվածային ներգործությունից*
*որբ ենք բոլորս էլ՝*
*լքված մեր տնից,*
*զրկված մեր բնից*
*ու ծնողական ջերմ զգվանքներից:*

*Ուստի կաթոգին (առանց նայելու մեր տկարության,*
*Անճարությունից մեզ բաժին հասած բիրտ ստորության*
*Ու որբությունից արատ ստացած՝ աներեսության)*
*փարվի՛ր մեզ, Մայրի՛կ,*

*Գրկի՛ր Քո Մանկան՝ Հիսուսի սիրով*
*Եվ արցունքներով որդեկորույս մոր՝*
*Լվա՛ զալիքի անհայտ մնացած արահետները*
*մեր որբ սրտերի…*

*Խնդրում ենք,*
*Ցողի՛ր հոգին մեր լույսով,*
*Մաքրի՛ր վարդաբույր Քո արցունքներով*
*մեր մութ սրտերի գիշերապատիր խորհուրդները սեւ,*
*Հաստատի՛ր դու մեզ Քո միակ Որդու որդեգրության*
*անդաստանի մեջ,*

*Որ կարողանանք*
*Մեր արցունքների ցողով խնկաբույր,*
*Վրձնով աղոթքի՝ գոհաբանական,*
*Քո աստվածային կերպարը գծել մեր հոգիներում՝*
*մեր՝ անճարներիս,*
*մոլության մատնված հալածյալներիս,*
*ոտքերիդ փարված անառակներիս,*
*վերանորոգման հույսը սպառած անօրեններիս,*

*Որպեսզի*
*Քեզնով, սո՛ւրբ Աստվածամայր,*
*Տիրամա՛յր Լույսի,*
*Վեհամա՛յր հույսի,*
*Ակաթե աղբյուր՝ մայրական սիրո ու նվիրումի,*
*Ուժ առնենք նորից՝ գտնելու համար տունդարձի ճամփան՝*
*Փառավորելով Քո խաչյալ Որդուն…*
*Այս կերպ հայտնելու երախտիքը մեր*
*Ու սփոփելու ցավը Քո սրտի,*
*Երբ խաչելության սնարի առաջ*
*Տեսար Քո միակ Որդուն որբացած՝*
*Թե՛ Հորից հզոր, թե՛ մորից տկար…*

*Ու որդեգրեցիր ե՛ւ աստ, ե՛ւ անդի,*
*Մայր լինել բոլոր այն որբուկներին,*
*Ովքեր կզրկվեն հզորությունից իրենց հայրերի*
*Եվ կամ՝ զգվանքից սիրող մայրերի…*

*Քեզ ապավինած օրերս անցան,*
*Եվ ես չզգացի որբությունը իմ:*
*Ու ամեն անգամ խոր լքվածության,*
*Հուսահատության պահերին կյանքիս,*
*Քո միակ Որդուն ապավինելով,*
*Իմ արցունքների ցողով խնկաբույր,*
*Վրձնով աղոթքիս գոհաբանական,*
*Աստծուց մերժված ու տարագրված՝*
*Հալածյալ հոգուս սենյակի խորքում*
*Ուրվագծեցի պատկերդ սիրո Քո աստվածային,*
*Իմ սուրբ Տիրամայր…*

*…Ու աղոթեցի՝*
*հուսավառությամբ, սրտանց ու անկեղծ…*

Կից սենյակում

# Արդարությունը որպես փրկության ճանապարհ

## Մեր հյուրն է Երեւանի Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր սպասավոր Տ. Եսայի քհն. ԱՐԹԵՆՅԱՆԸ

**- Տե՛ր հայր, մեր Տերը երանիների շարքին է դասում արդարության քաղց եւ ծարավ ունեցողներին՝ նրանց համար որպես պարգեւ խոստանալով հագեցումը: Ի՞նչ ասել է արդարության քաղց եւ ծարավ:**

- Եթե հիշում եք՝ Նոր Կտակարանի այդ դրվագում, ի մասնավորի Ղուկասի Ավետարանում, Քրիստոսն Իր ուսուցումները ձեւակերպում է երկու տարբերակով՝ երանիներով եւ վայերով: Մեր Տերը երանի է տալիս այն մարդկանց, որոնց միտքն ու հոգին ուղղված են դեպի ներքին առաքինություններն ու հոգեւոր-բարոյական արժեքները, միաժամանակ վայերի տարափ է տեղում նրանց գլխին, որոնց մտածումներն ու ջանքերը մարմնական ցանկությունների եւ հաճույքների բավարարմանն են ուղղված: Նույնն է նաեւ խնդրո առարկա երանիի պարագայում. «Վա՜յ ձեզ, որ այժմ հագեցած եք, որովհետեւ քաղցած պիտի մնաք» (Ղուկ. Զ 25),- ասում է Տերը, իսկ արդարության քաղց ու ծարավ ունեցողներին խոստանում հավիտենական երանություն ու հագեցում: Ո՞ր արդարության մասին է խոսքը: Անշուշտ ճշմարիտ եւ Գերագույն Արդարության, որ հենց Ինքը՝ Քրիստոսն է: Եվ ուրեմն՝ արդարության հետեւող յուրաքանչյուր մարդ հետեւորդը եւ աշակերտն է Քրիստոսի: Ավելին՝ «արդարություն» բառն Ավետարանում գրեթե միշտ համարժեք է «փրկություն» եզրին: Հիշենք, թե Ավետարաններում, առաքելական ու ընդհանրական թղթերում Տերը եւ առաքյալները քանիցս են մատնացույց անում արդարությունը՝ որպես փրկության ճանապարհ: Արդարությամբ փրկվելու գաղափարը նույնքան հստակ է նաեւ Հին Ուխտում: Իսկ Մատթեոսի Ավետարանի «Ապավինում նախախնամությանը» ենթագլխում Քրիստոսն ուղղակիորեն պատվիրում է. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. Զ 33): Ակնհայտ է, որ «Նրա արդարությունը», որ անմիջապես երկրորդվում է «Աստծո արքայությանը», կարող են փնտրել միայն նրանք, ովքեր փափագն ունեն հենց ա՛յդ արդարության:

**- Աստծու էությունը ներկայացնող բնորոշիչների շարքում կարեւոր տեղ ունի «ամենաարդար» բնորոշիչը: Նրան նաեւ Արդարության Արեգակ են կոչում: Մյուս կողմից՝ մարդկային հասարակությունը, փորձելով իրավականորեն կանոնակարգել միմյանց հետ հարաբերությունները, ստեղծել է այնպիսի կառույցներ, որոնք կոչված են իրականացնելու արդարությունն աշխարհի վրա: Եվ եթե առաջին դեպքում անխոտելի ու անբասիր է արդարությունը, ապա երկրորդ՝ մարդկային արդարության պարագայում այն ակնհայտորեն լի է հակասություններով ու թերություններով: Այդ դեպքում ինչո՞ւ մարդիկ չեն ձգտում իրենց նմանի հետ հարաբերությունները կառուցել-կանոնակարգել աստվածային արդարության օրենքներով:**

- Չէի ասի, թե մարդը չունի այդ ձգտումը: Հիշո՞ւմ եք Ավետարանի «Ոսկե օրենքը». «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ւք արեք նրանց...» (Մատթ. Է 12): Այս պատվիրանն արդարության օրենքի ամբողջական եւ կատարյալ ձեւակերպումն է եւ կարծես թե ընդունելի ու հարազատ է բոլորիս համար. ամենքս ենք ուզում, որ մեզ հետ արդար վարվեն, հարգեն մեր իրավունքները: Այլ հարց է, թե մենք ինքներս մի՞շտ ենք արդյոք այդպես վարվում: Ցավոք, ո՛չ: Պատճառներից մեկն այն է, որ մարդկանց մոտ հաճախ տարբեր են արդարության պատկերացումները: Մարդկային արդարությունը երբեք չի եղել կատարյալ՝ աշխարհի գոյության ամբողջ ընթացքում եւ, հավանաբար, չի էլ կարող լինել: Բայց դա մեզ չպիտի վհատեցնի. կարեւորն այն է, որ մենք փորձենք այդ արդարությունը կատարյալ կերպով վերարտադրել մեր կյանքում, մեր գործերում, մեր մտածումներում: Այո՛, եղել են եւ պիտի լինեն սայթաքումներ, շեղումներ, քանի որ մարդն անկատար է ու տկար: Սակայն կարեւորն այն ջանքն է, որ մենք պիտի գործադրենք՝ հասնելու այդ արդարությանը, եւ հավատացե՛ք՝ այն մեզ համար կդիտվի կատարելություն...



**- Ըստ Ձեզ՝ ի՞նչն է ամենից շատ նպաստում անարդարության «ծաղկմանը»:**

- Ամեն տեսակի չարիքի եւ անարդարության սկիզբը մեղքն է՝ իր բոլոր կործանարար դրսեւորումներով՝ ագահություն, նախանձ, չարակամություն եւ այլն: Ցավոք, մեր այսօրվա իրականության մեջ դրանք շատ ավելի սուր դրսեւորումներ ունեն. մարդիկ կարող են անարդարություն գործել անգամ դիմացինին՝ իր նմանին, ոչնչացնելու համար:

**- Ի՞նչ միջոցներով կարելի է դիմակայել անարդարություններին:**

- Բոլոր անարդարություններին դիմակայելու հիմնական եւ միակ ճանապարհը Աստված է. համբերությամբ, հավատքով եւ, թող զարմանալի չթվա, հենց արդարությամբ, արդարություն գործելով: Փոխադարձ անարդարությունը նույն «ակն ընդ ական»-ն է, որով ոչնչի չես հասնի. սե՛րը պետք է լիարժեքորեն ներկա լինի նաեւ այստեղ:

**- Աստվածաշնչյան բոլոր մարգարեներից, հավատքի նվիրյալներից, նահատակներից քչերն են, որ արժանացել են արդար կոչվելու շնորհին: Մի՞թե արդարությունն ավելի բարձր բարոյական եզր է, քան, ասենք, սրբությունը կամ այլ առաքինությունները:**

- Գաղատացիներին ուղղված թղթում Պողոս առաքյալն ասում է. «Գիտենք, որ մարդ չի արդարանա օրենքի գործերով, այլ միայն՝ Հիսուս Քրիստոսի հավատով. եւ մենք հավատացինք Քրիստոս Հիսուսին, որպեսզի արդարանանք Քրիստոսի հավատով...» (Գաղ. Բ 16): Այս տողերը գրելիս Պողոսը վստահաբար իր մտքում ունեցել է հավատքի նվիրյալ այրերին, հատկապես Աբրահամին, ով «իր հավատով արդարացավ» (հմմտ. Ծննդ. ԺԵ 6): Հետեւաբար՝ արդարության տանող ճանապարհը սկսվում եւ պսակվում է հավատով: Ինչ-որ առումով, այո՛, արդարությունը բոլոր առաքինությունների միատեղումն է:

Շարունակությունը՝ էջ 7

ԻՈՇԱՆ ԱՐՔ.
ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ
(ՇԱԽՈՎՍԿՈՅ)

# ՓՈՔՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 20-22*

Ցանկացած մխիթարություն, որ Մխիթարիչ Սուրբ Հոգուց չէ, այն անմիտ գայթակղությունն է, որի վրա են իրենց երազները կառուցում մարդկային դրախտի կազմակերպիչները: Մխիթարիչը միայն Քրիստոսի ճշմարտության արարիչ Հոգին է:

Հոգով աղոթել ծխախոտի գլանակ ծխելով՝ հնարավոր չէ: Քարոզել գլանակ ծխելով՝ հնարավոր չէ: Աստծո տաճար մտնելուց առաջ գլանակը մի կողմ է շպրտվում... *բայց չէ՞ որ Աստծո տաճարը մե՛նք ենք:*

Ով կամենում է ամեն րոպե լինել Աստծո տաճար, հեռու կշպրտի ծխախոտի գլանակը, ինչպես եւ ցանկացած կեղծ միտք, ցանկացած անմաքուր զգացում: Սեփական անձի մեջ հոգեկան փոքր շարժումների հանդեպ վերաբերմունքը մարդու հավատքի ջերմեռանդության եւ Աստծո հանդեպ նրա սիրո ջերմաչափն է:

Կարելի է կյանքից վերցված այսպիսի օրինակ պատկերացնել. ծխախոտը՝ իբրեւ բույս, իր մեջ ոչ մի չարիք չունի (ինչպես եւ ոսկի ավազը կամ բամբակը, որից թղթադրամն է պատրաստվում): Ծիրանն Աստծո ստեղծած բույսն է: Ոգելից խմիչքը մարդու



օրգանիզմին շատ օգտակար է լինում որոշ պահերի եւ որոշակի չափի մեջ, առանց հոգու հետ հակասության մեջ մտնելու, ինչպես չափավոր թեյը կամ սուրճը: Ծառը, նյութը, որից կահույքն է պատրաստվում, ամեն ինչ՝ Աստծունն է... Բայց հիմա վերցնենք վերոնշյալները հետեւյալ համադրությամբ. փափուկ բազկաթոռին մարդը փռվել եւ հավանյան գլանակ է ծխում՝ ամեն րոպե իր մոտ դրված աբրիկոտինի (ծիրանի լիկյորի) գավաթից ըմպելով... Այս մարդն այսպիսի վիճակում կարո՞ղ է արդյոք զրուցել կենդանի Աստծո մասին կամ աղոթել Նրան: Ֆիզիկապես՝ այո՛, հոգեպես՝ ո՛չ: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ մարդն այս պահին անհոգ վիճակում է, նրա հոգին ընկղմվել է թե՛ բազկաթոռի մեջ, թե՛ հավանյան գլանակի, թե՛ աբրիկոտինի գավաթի: Այս պահին նա համարյա հոգի չունի: Նա, ինչպես Ավետարանի անառակ որդին, թափառում է «հեռավոր վայրերում»: Այսպես մարդը կարող է կորցնել իր հոգին: Մարդն այն կորցնում է շարունակ: Եվ լավ է, եթե շարունակ էլ վերագտնում է այն, պայքարում, որ չկորցնի, դողում իր հոգու վրա, ինչպես իր սիրելի մանկան: *Հոգին անմահության մանուկն է*՝ մեզ շրջապատող աշխարհի պայմաններում անօգնական ու խեղճ: Ինչպե՜ս պետք է մեր հոգին սեղմենք մեր կրծքին՝ մեր սրտին, ինչպե՜ս պետք է սիրենք նրան, որը նախատեսված է հավիտենական կյանքի համար: Օ՜, ինչպե՜ս պետք է մաքրենք նույնիսկ ամենափոքր կեղտաբիծը նրա վրայից:

Այստեղ ներկայացվեց հոգին պահպանել չկարողանալու անհնարինության մի օրինակ՝ հեշտասիրաբար այն բաշխելով շրջապատող առարկաների՝ բազկաթոռի, ծխախոտի գլանակի եւ լիկյորի վրա: Բերված օրինակը շատ գունեղ է, բայց կյանքում ավելի գունեղներն էլ են լինում: Սակայն եթե վերցնենք ոչ թե գունեղ, այլ մոխրագույն օրինակ, բայց նույն անհոգ վիճակում գտնվող հոգուց, նորից նույն մթնոլորտը կտիրի, որում ավելի փոքր մեղք կլինի Քրիստոսի մասին լռելը, քան Նրա մասին խոսելը: Ահա՛ թե որտեղ է բացահայտումը, թե ինչու է աշխարհը լռում Քրիստոսի մասին, ինչու ո՛չ փողոցներում, ո՛չ սալոններում, ո՛չ ընկերական զրույցներում չեն խոսում տիեզերքի Փրկչի՝ աշխարհի միակ Հոր մասին՝ չնայած այն բազմաթիվ մարդկանց առկայությանը, ովքեր հավատում են Նրան:

Միշտ չէ, որ ամոթ է մարդկանց առաջ խոսել Աստծո մասին. երբեմն Աստծո առաջ է ամոթալի լինում մարդկանց պատմել Նրա մասին: Աշխարհը բնազդաբար հասկանում է, որ այն վիճակում, որում ինքը միշտ գտնվում է, ավելի փոքր մեղք կլինի Քրիստոսի մասին լռելը, քան Նրա մասին խոսելը: Ուստիեւ մարդիկ լռում են Աստծո մասին: Սա սարսափելի ախտանշան է: Աշխարհը հեղեղվում է բառերի լեգեոններով, մարդու լեզուն բռնված է այդ դատարկ լեգեոններով, եւ ոչ մի բառ, համարյա ոչ մի բառ՝ Աստծո՝ ամեն ինչի Սկզբի, Վերջի եւ Առանցքի մասին:

Շարունակությունը՝ էջ 8

# ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ-80

Օրերս Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց ժողովրդական նկարիչ, ԳԱԱ իսկական անդամ, պետական մրցանակի դափնեկիր, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի շուրջ 40 տարվա անդամ Գրիգոր Խանջյանի ստեղծագործությունների (հիմնականում՝ գրաֆիկական) հետմահու անհատական ցուցահանդեսը՝ նվիրված ծննդյան 80-ամյակին:

Խանջյանը 20-րդ դ. 60-ական թվականների Խորհրդային Հայաստանում ասպարեզ իջած այն սերնդի ներկայացուցիչներից էր, ովքեր իրենց արծարծած թեմաների, խոհափիլիսոփայական ենթատեքստերի, հորինվածքային մշակումների յուրօրինակ ու անսպասելի լուծումներով եւ ամենագլխավորը՝ իրենց քաղաքացիական, ազգային ու համամարդկային արժեքների, ճշմարիտ մշակույթի հանդեպ ունեցած անկոտրում դիրքորոշմամբ ասես մարտահրավեր նետեցին երկրում տիրող կաղապարված, կեղծ գաղափարախոսությանը, գրական-գեղարվեստական ըմբռնումներին, ապազգային բարոյահոգեբանական ողջ մթնոլորտին: Ազգային ինքնագիտակցության վերազարթոնքի մեջ անհերքելի է նրանց ավանդը: Մենք պարտք ենք այդ սերնդին եւ հույս ունենք, որ մի օր գալու է նրանց ապրած կյանքին եւ գործունեությանը համապարփակ գնահատական տալու ժամանակը:



Ուստի մի փոքրիկ հոդվածի շրջանակներում խոսել Գրիգոր Խանջյան արվեստագետի մասին՝ որպես այդ սերնդի ներկայացուցչի, հավասարազոր է ոչինչ չասելուն: Նրա միայն ստեղծագործական կյանքն ինքնին անդուլ որոնումների ու պրպտումների մի քուրա էր, մի դարբնոց, ուր թրծվում, ձեւ ու կերպարանք էին ստանում ոչ միայն նկարչի գեղանկարչական ու գրաֆիկական սկզբունքները, այլեւ նախասիրած թեմաներն ու մոտիվները, դրանցում թաքնված գաղափարական ու փիլիսոփայական հարցադրումները: Նրա ստեղծագործական միտքը, ուսանողական տարիներից ի վեր, երբեք չի սահմանափակվել միայն «արվեստ՝ արվեստի համար» մտայնությամբ, անհացե Գեղեցիկի ստեղծման խնդիրներով: Կերպարվեստում իր դավանանքը, իր ձեռագիրը մշակելիս նա երբեք չի բացառել հայ լինելու, ազգային պատմություն ու կենսագրություն ունենալու, որոշակի ու յուրօրինակ մշակույթի, ավանդույթների կրողն ու ժառանգորդը լինելու պարագան: Երբեք չի ձգտել հայրենիքից ու ժողովրդի կյանքից հեռու, բայց ավելի նպաստավոր պայմաններում ապրելու տեսլականին, թեպետ շատերից ոչ պակաս նա ունեեր դրա հնարավորությունը: Նա ամուր ժայռի պես մխրճված էր իր հողում: Նա այդ հողի հին ու նոր առասպելների, լեգենդների, հնօրյա ու նորօրյա իրականության ակտիվ մասնակիցն էր, իր ժամանակի «գոծող գլխավոր անձ»-երից մեկը: Նա երբեք կրավորական կեցվածք չընդունեց եւ երբեք ուշադրություն չդարձրեց, թե իր այդ կեցվածքի տակ ով ինչ է տեսնում կամ երեւակայում: Նրա մտահոգությունները դուրս էին մանրախնդրություններից ու անձնական նեղ ցանկություններից:

Նկարչի գրաֆիկական ու գեղանկարչական բոլոր գործերը, սկսած Հ. Թումանյանի «Անուշ», «Լոռեցի Սաքոն» պոեմների, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Գ. Էմինի «Բալլադ ձկնորսի մասին», «Սասունցիների պարը» պոեմների նկարազարդումներից մինչեւ Պ. Սեւակի «Անլռելի զանգակատան» նկարազարդումները, ոչ միայն նկարչի պրոֆեսիոնալ ձեռքբերումների հավաստումը եղան, այլեւ ընկալվածի եւ հենց իր՝ նկարչի սուբյեկտիվ աշխարհի հոգեբանական վիճակների պատկերային դրսեւորումը: Խանջյանի այս նկարազարդումներն աչքեցնում են գրական երկի խոր իմացությամբ, ժողովրդին ու ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունների դրսեւորմամբ, կերպարների հոգեբանական արտահայտմամբ, բանաստեղծական պատկերներին, գրական հեղինակի աշխարհայացքին ու գրելաոճին համահունչ գրաֆիկական ձեւերի լուծմամբ:



Նրա արվեստում չկա ոչ մի ավելորդ, աննպատակ գիծ: Գիծը, գծանկարը, լուսաստվերը, բիծը, մի խոսքով՝ ողջ արտահայտչամիջոցները ուղղված են մեկ նպատակի՝ գերխնդրի բացահայտմանը:

Խանջյանի համար արվեստը չի եղել միայն կերպավորման խնդիրներ լուծելու միջոց, այլեւ գույնի, գծի, պատկերի միջոցով իր քաղաքացիական դիրքորոշումը, աշխարհզգացողությունը, ճշմարիտ արժեքն ու իմաստը վերարտադրելու երջանիկ հնարավորություն: Նրա ուշադրության ու հետաքրքրությունների շրջանակներում մշտապես կողք կողքի հարեւանել են ե՛ւ թեմատիկ կտավը, ե՛ւ բնանկարը, դիմանկարն ու նատյուրմորտը:

Էպիկականն ու քնարականը միատեղ ու միասնական են հանդես գալիս նկարչի գործերում: Խուսափելով կեղծ տոնական մթնոլորտի պատրանք ստեղծելուց՝ նա մշտապես կտավին ու թղթին էր հանձնում իրականության պատկերը՝ չեշտելով հիմնականում այն ուղղվածությունը, որն առաջնային էր համարում իր ընտրած թեմայում: Դրա լավագույն օրինակներից են նկարչին համընդհանուր ճանաչում բերած «Արեւածաղիկներ», «Ե՛վ հաց, ե՛ւ սեր, ե՛ւ երազանք», «Հացը լեռներում», «Հայաստան» եւ բազում այլ թեմատիկ կոմպոզիցիաներ:



Շարունակությունը՝ էջ 8

# Արդարությունը որպես փրկության ճանապարհ

Սկիզբը՝ էջ 6

**- Աստվածային արդարության տեսանկյունից դատելու պարագայում առնվազն ցնորք կամ կեղծիք պիտի թվա այնպիսի մի երեւույթ, ինչպիսին այսօր շատ հոլովվող «սոցիալական արդարություն» եզրն է: Նկատի ունեմ այն, որ «հանուն արդարության» կարգախոսով աշխարհում տեղի են ունեցել (եւ դեռ ունենում են) հեղափոխություններ, պատերազմներ, սոցիալական ու քաղաքական ավերիչ ցնցումներ, որոնք, որպես կանոն, միշտ էլ ուղեկցվել են արյունալի ոճրագործություններով, սպանություններով, զազրելի բռնություններով... Ցավոք, դրանից զերծ չմնաց նաեւ Եկեղեցին (խոսքս, անշուշտ, միջնադարյան ինկվիզիցիայի մասին է, որը որեւէ կապ չունի մեր Եկեղեցու հետ):**

**Մեր Տերն Իր 4-րդ երանիում արդյոք չի՞ ակնարկում նաեւ անհատական կամ սոցիալական իրավունքի պաշտպանության հարցը կամ, այլ կերպ ասած, Հիսուս Քրիստոսը կարո՞ղ էր ընդունել արյան գնով ձեռք բերված եւ ոճիրներով ուղեկցվող արդարությունը:**

- Իհարկե՝ ո՛չ: Պատմությունը եւ հասարակության զարգացման փորձն իսկ ցույց են տալիս, որ շահերի նման բախման պարագայում արդարությունը չի կարող քիչ թե շատ լիարժեք դրսեւորվել մարդկային կյանքում եւ այդպես էլ մնում է լոկ իբրեւ կարգախոս, եթե ոչ՝ ծխածածկույթ՝ սոցիալական ու քաղաքական որոշակի խմբերի շահադիտական նպատակների համար: Միայն մարդկային սահմանափակ ընկալումով այն կարող է դիտվել իբրեւ արդարություն, որը ոչ մի առնչություն չունի մեր Տիրոջ երանավետ արդարության հետ:

**- Ժողովրդական իմաստությունն ասում է. «Արդարությունը հիվանդանում է, սակայն չի մահանում»: Մեր կյանքում քիչ չեն այն դեպքերը, երբ հաղթանակում է անարդարությունը, չարիքը: Եվ շատերին, ովքեր գոնե իրենց կարծիքով չարիք չեն գործում, մշտապես հուզում է այն հարցը, թե ինչո՞ւ Աստված հենց ա՛յս աշխարհում չի պատժում անարդարություն գործողներին՝ ի ցույց բոլորի:**

- Մեզ՝ հոգեւորականներիս, այդ հարցը շատ են տալիս, եւ, չգիտես ինչու, Աստծու եւ Նրա Եկեղեցու հանդեպ մեղադրանքի անթաքույց մի երանգով: Եկե՛ք գոնե այս հարցում Աստծուն հանգիստ թողնենք. ի՞նչ պիտի անի Աստված, եթե մենք այս կյանքում խնդիրներ ու դժվարություններ ունենք, որ հենց ինքներս ենք ստեղծել մեզ համար: Աստված մեզ տվել է ազատ կամք, միտք, բանականություն, տվել է այս աշխարհը, ցույց է տվել բարին եւ այն գործելու ճանապարհը, որով քայլելով պիտի արժանանանք պարգեւատրման եւ երանությունների:



Ընտրությունը մերն է: Եվ եթե մենք, թողած բարին, ընտրում ենք մեղքի ու կործանման ուղին եւ այդպես՝ անզեղջ սրտով էլ ընթանում ենք այս կյանքում՝ մեջքով դեպի Աստված եւ հոշոտելով միմյանց, Աստված ի՞նչ պիտի անի... Թող ոչ ոք չկասկածի, որ չար ու անարդար մարդիկ պիտի իրենց պատիժը կրեն ե՛ւ այս կյանքում, ե՛ւ հանդերձյալում: Մեղքերի մեջ թաղված մարդու համար այս աշխարհում երկար ապրելն արդեն իսկ պատիժ չէ՞ միթե... Սակայն հարկ է, որ ավելի լայնախոհ լինենք եւ որեւէ մեկին դատելուց առաջ փորձենք նայել ինքներս մեզ, մեր ներսը. մենք իրավունք ունե՞նք որեւէ մեկին դատելու. չէ՞ որ, եթե արդարությամբ մեզ դատենք, ապա այս կամ այն չափով մեղավոր ենք բոլորս, եւ միայն Աստծու ողորմածության շնորհիվ է, որ կարող ենք արդարանալ եւ արժանի դառնալ փրկության: Թողնե՛նք, ուրեմն, բոլոր դատաստանները Բարձրյալին:

**- Սոդոմը եւ Գոմորը կործանվեցին, որովհետեւ տասն արդար մարդ չգտնվեց այնտեղ: Նույնը՝ ջրհեղեղի պարագայում. Աստծու կամքով միայն Նոյը փրկվեց, քանի որ մարդկանցից միայն նա էր արդար: Արդյոք այսօր այդքան շա՞տ են արդարները, որ աշխարհը դեռ կանգուն է:**

- Ջրհեղեղից հետո Աստված ուխտ արեց Նոյի հետ՝ խոստանալով, որ այլեւս աշխարհը չպիտի կործանի: Եվ դա Տիրոջ անսահման սիրո եւ ողորմածության արտահայտությունն էր մարդու հանդեպ: Իհարկե, չենք կարող խոսել, մանավանդ վկայել երկրագնդի վրա ապրող արդարների հոծ բազմության մասին... Սակայն ճիշտն այն է, որ չփնտրենք ու չհաշվենք, թե քանի արդար կա այս աշխարհում. բոլորս էլ ունենք մեր թե՛ արդարության, թե՛ անարդարության պտուղները: Նաեւ չմոռանանք, որ ոչ թե մեր արդար լինելն է պահում այս աշխարհը, այլ միայն եւ միայն Աստծու սերը, Նրա անսահման ողորմածությունն ու ներողամտությունը: Աշխարհի որեւէ անկյունում մարդկային օրենքները չեն կարող կատարյալ լինել եւ ուրեմն՝ չեն կարող լիարժեք արդարություն բերել: Դրանք կարեւոր են այնքանով, որ կանոնակարգում եւ կազմակերպում են մեր հասարակական կյանքը: Բայց միայն Տիրոջ Ավետարանից բխող արդարությունն է, որ պիտի մեզ պահպանի, այդ արդարության քաղցն ու ծարավը, դրանո՛վ հագենալու փափագը պիտի ունենանք, որ արժանանանք բաղձալի երանության:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ-80



*Սկիզբը՝ էջ 7*

Այստեղ արժե հիշատակել նաեւ «Իսպանական տպավորություններ», «Եվ այս մեր օրերում» գրաֆիկական շարքերն ու հատկապես նատյուրմորտները:

Խանջյանի վերջին տասնամյակների արվեստում իր բացառիկ տեղն ունեցավ պատմական թեման: Հարկ է նշել, որ նկարչական ձիրքն ու օժտվածությունը դեռեւս բավարար չեն պատմական թեմային անդրադառնալու համար: Բազմաֆիգուր, մոնումենտալ գործերի ստեղծումն աշխատատար ու դժվարին լինելուց ավելի պահանջում է գիտելիքների ու իմացությունների հսկայական պաշար:

Ժամանակաշրջանի քաղաքական, հոգեւոր, բարոյահոգեբանական մթնոլորտի իմացությունից զատ, նկարչից պահանջվում է մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի խորազնին ուսումնասիրություն, պատմական նյութը նորովի մեկնաբանելու, ժամանակի պահանջների հետ անցյալը երկխոսության մեջ դնելու եւ այդ երկխոսության իմաստն ապագայի մեջ նորովի հնչեցնելու կամք ու հմտություն: «Հայոց այբուբենը» եւ «Վարդանանք» գոբելենների, համապատասխանաբար դրանց կարտոնների ստեղծման գաղափարն ամենեւին պատահական չէր: Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Առաջինին ու Գրիգոր Խանջյանին չէին կարող չհուզել մեր ժողովրդի կենսագրության այդ երկու խիստ բախտորոշ դրվագները: Հիշենք, երբ Խորհրդային Միության վերջին սահմանադրությունից միտումնավոր կերպով հանվեց ազգային հանրապետությունների պետական լեզվի հարցը, Խանջյանն առաջիններից մեկն էր, որ ընդվզեց այդ երեւույթի դեմ՝ համարելով այն մեծագույն ոտնձգություն մեր ազգային ինքնության, մեր ճշմարիտ լինելության դեմ:

1981 թվականին, երբ հանրության դատին ներկայացվեցին վերոհիշյալ գործերի կարտոնները, Հայաստանի նկարչի տան ցուցասրահը վերածվել էր կատարյալ տոնակենտրոնի. նկարիչն անդրադարձել էր սրբացված, դարերի մեջ փայփայված երկու ազգապահպան հզոր գործոնների: Առավոտից մինչեւ ուշ երեկո հանրապետության բոլոր ծայրերից մարդկային հոսքը գալիս ու անցնում էր ցուցասրահով: Տարիների հեռվից այդ երեւույթը հիշեցնում էր 1988-ի Ազատության հրապարակը: Երկուսում էլ պոռթկում էր ազգային ոգու ճիչը, ազգային համերաշխության ու միասնականության շունչը ճիշտ այնպես, ինչպես 406 թվականին, երբ հաստահեղյուս բերդապարիսպների պես ոտքի ելան Հայոց Վռամշապուհ արքան, կաթողիկոս Սահակ Պարթեւն ու Մեսրոպ Մաշտոցը, 451-ին՝ Վարդանանք, որոնք Ավարայրի դաշտում, որպես հրածին ժայռեր, փոթորկվելով ժայթքեցին վասն հավատի եւ վասն հայրենյաց:

Խանջյանական կարտոններում շուրջ 16 դար առաջ կատարվածը մեկնաբանված ու ներկայացված է որպես շարունակությունը սուրբ Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Մեծի սկսած գործի, եւ որը դարերի մեջ անվերջորեն շարունակվում է ու պիտի հարատեւի ամեն մի ճշմարիտ, երդվյալ հայի միջով, ով ապրում, արարում ու նահատակվում է վասն հայրենիքի ու հավատի, վասն ազգի հարատեւության:

Այս խորհուրդն էր իր հոգում կրում նկարիչը, երբ մայրաքաղաքի կենտրոնը «Ջեյթուն» թաղամասին կապող «Կասկադի» (ճարտարապետ՝ Ջիմ Թորոսյան) սրահներից մեկում շուրջ մեկ ու կես տասնամյակ, 7 մետր բարձրության վրա կանգնած, մեն-մենակ, առանց օգնության ու օգնականի՝ փորձում էր ավարտին հասցնել իր եռապատկեր որմնանկարը՝ «Հայոց այբուբենը», «Վարդանանքը» եւ «Վերածնունդը»: Ցավոք, նկարիչը չհասցրեց, հնարավորություն չտրվեց նաեւ Հենրիկ Մամյանին՝ ավարտին հասցնելու անավարտ մնացած «Վերածնունդը»: Սակայն այն, ինչ հասցրեց թողնել Գրիգոր Խանջյան մարդը, նկարիչը, քաղաքացին, այնքան է, որ կարող ենք համարձակորեն ասել՝ հավերժություն տանող ճանապարհը անցնում է նաեւ այս աշխարհում մարդու թողածի միջով:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*



---

**ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱԽՈՎԱԿՈՅ)**

# ՓՈՔՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 6*

Որովհետեւ Աստծո մասին խոսել նշանակում է իսկույն մերկացնել սեփական անձն ու աշխարհը: Իսկ եթե այնուամենայնիվ Աստծո մասին խոսքն ասվել է, այն դժվար է մինչեւ վերջ տանել թե՛ սեփական անձի, թե՛ աշխարհի առաջ:

Եթե մարդը զգվանք չունի իր փոքր մեղքերի հանդեպ, նա հոգեպես անառողջ է: Իսկ եթե կա զգվանք, բայց «ուժ չկա» թուլությունը հաղթահարելու, նշանակում է՝ այդ թուլությունը թողնվելու է մինչեւ այնժամ, երբ մարդն իր հավատը ցուցաբերի իր համար ավելի վտանգավոր ինչ-որ բանի դեմ պայքարում, քան այդ թուլությունը, իսկ վերջինս թողնվում է նրան խոնարհեցնելու համար: Որովհետեւ քիչ չեն այն մարդիկ, ովքեր արտաքուստ անաբատ են՝ չեն խմում, չեն ծխում, բայց, ըստ Կղեմաքոսի խոսքի, նման են «փտած խնձորի», այսինքն՝ լցված են բացահայտ կամ ծածուկ հպարտությամբ: Եվ չկա այլ հնարավորություն նրանց հպարտությունը խոնարհեցնելու, բացի ինչ-որ անկումից: Սակայն Աստծո արքայությունից եւ նրա օրենքներից դուրս կմնա նա, ով այս կամ այն դատողությամբ ինքն իրեն «կթույլատրի» փոքր մեղքեր գործել: Այդպիսի մարդը, ով «քնեցնում է» իր խիղճը, անընդունակ է դառնում ոտք դնելու հոգու իրական կյանքից ներս: Նա միշտ մնում է ինչպես մի պատանի, ով մոտենում է Քրիստոսին եւ իսկույն հեռանում տխրությամբ, կամ գուցե նույնիսկ առանց տխրության, որպեսզի... «ծխի»:

Խստաբարոյությունն ու մաքրակրոնությունը (պուրիտանությունը) օտար են ավետարանական հոգուն: Փարիսեցիական արդարությունն առանց սիրո՝ շատ ավելի խավար է Աստծո աչքին, քան ցանկացած մեղք: Սակայն պատվիրանների կատարման մեջ քրիստոնյաների գաղջությունը նույնպես խավար է: Ինչպես փարիսեցիները, այնպես էլ Աստծո տաճարում վաճառողներն ու ծխողները հավասարապես վտարվում են տաճարից:

Որովհետեւ Աստծո կամքը «մեր սրբությունն է» (Ա Թես. Դ 3): Նրբանկատ խիղճը ինքը կսրի տեսողությունը՝ նկատելու համար այն օտար փոշին, որ նստած է հոգու վերքերի վրա:

Աստծո Որդին եւ Մարդու Որդին հոգեւոր ծարավի համար մեզ մի պատվիրան է ավանդել. «Կատարյա՛լ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48): Այստեղ Տերը կարծես ասում է. *«Մարդի՛կ, Ես ձեզ չեմ տալիս չափեր. դրանք ինքնե՛րդ որոշեք: Ինքնե՛րդ որոշեք Իմ մաքրության հանդեպ ձեր սիրո եւ այդ սիրուն ձեր հնազանդության չափը»:*

*Թարգմանությունը՝*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

---

# ՎԻՐԱՀԱՅՈՑ *թեմում*

## Երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված արարողություններ

Ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի՝ Վիրահայոց թեմի Ջավախքի, Բաթումիի հայոց եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Մարդաշատ էր նաեւ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցին, ուր հոգեհանգստյան արարողությունն անցավ հանդիսապետությամբ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս Միրզախանյանի եւ մասնակցությամբ քահանայից դասի: Արարողակարգի ավարտին սրբազան հայրն իր խոսքն ուղղեց եկեղեցում ներկաներին: Նա իր օրհնությունը բերեց բոլոր այն ժողովուրդներին, ովքեր դառնադաժան այդ օրերին սատար կանգնեցին հայ ժողովրդին: Առաջնորդն իր երախտագիտությունը հայտնեց հատկապես աղետյալ գոտուն առաջինը օգնություն ցուցաբերած եղբայր վրաց ժողովրդին:

Վիրահայոց սուրբ տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքով զոհերի խնկաբույր հիշատակը ոգեկոչեցին նաեւ Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հայ խորհրդարանականները: Այստեղ էր նաեւ 1980-ականների վերջերին Վրաստանի կենտկոմի առաջին քարտուղար Ջումբեր Պատիաշվիլին, ով 1988-ի չարագույժ օրերին անձամբ էր օգնում աղետյալ գոտուն: Ամեն տարի դեկտեմբերի 7-ին վրաց ժողովրդի այս մեծ հայասերը հայոց տաճար է այցելում եւ իր խոնարհումը բերում հազարավոր զոհերի անմար հիշատակի առջեւ:

Եկեղեցական արարողությանը հաջորդեց երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշ-երեկոն, որը տեղի ունեցավ Թբիլիսիի Արամ Խաչատրյանի անվան թիվ 10 երաժշտական դպրոցի համերգասրահում: Կազմակերպիչներն էին Վիրահայոց թեմի առաջնորդարանին կից գործող Մշակույթի հանձնախումբը, Վրաստանում Հայաստանի դեսպանատունը եւ Վրաստանի հայերի միությունը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը: Այնուհետեւ ելույթ ունեցան դեսպան պարոն Սիլվանյանը, ՎՀՄ նախագահ պարոն Մուրադյանը, վրացահայ գրողներին «Վերնատան» նախագահ Գեւորգ Սնխչյանը:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ
**Հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 15. 12. 2006 թ.
**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**